

ՄԱՐԶԻԿ

հսլս

Մարզիկ

مجلة رياضية شهرية
تصدرها جمعية الهومنتمن بيروت

marzig

SPORTS MAGAZINE

34-ԲԴ ՏԱՐԻ, 2015, ԹԻԻ 6-7 (396-397) VOL. XXXIV № 6 - 7 السنة الرابعة والثلاثون - العدد رقم 6-7



ՀԻՄՆՈՒՄ ԶԳՈՐ



Հ.Մ.Ը.Մ.Ի ՄԱՍՆԱԾԻՒՂԻ ՀԻՄՆԱԳԻՐՈՒԹԻՒՆ՝ ՎՐԱՍՏԱՆԻ ՄԱՅՐԱՔԱՂԱՔ ԹԻՖԼԻՍԻ ՄԷՉ

9 Գ ե կ տ ե մ ք ե ռ 2015-ին, Հ.Մ.Ը.Մ.ի համահայկական ընդամենը հարյուրացու և նոր մասնաճիւղով մը, երբ ամիսներու և ամիսապարասրական աշխատանքէ ետք, Վրաստանի մայրաքաղաք Թիֆլիսի մէջ, Հ.Մ.Ը.Մ.ի Կեդրոնական Վարչութիւնը ներկայացնող պատուիրակութիւն մը, բաղկացած էր բայրներ՝ Գառնիկ Մկրտիչեանէ, Բաֆֆի Կելօղլանեանէ, Վաչէ Նաճարեանէ եւ Բագրատ Եսայեանէ, Թիֆլիսի հայ համայնքի ներկայացուցիչներուն փոխանցեց միութեան դրօշն ու կանոնագիրը, Հ.Մ.Ը.Մ.ի անկողնէն գործունէութեան յուսալի դաշտ մը բանալով Վրաստանի մէջ, ուր արդէն իսկ կը գործեն երկու այլ մասնաճիւղեր Չաւախքի Ախալքալաք եւ Ախալցխա շրջաններուն մէջ:



կարեւորութեան մասին: Ան նշեց Թիֆլիսի պատմական դերն ու նշանակութիւնը հայ ժողովուրդի պատմութեան մէջ, իբրեւ հայկական զարթոնքի եւ ազատագրական շարժումի հնոց քաղաք:

Թիֆլիսի հայ համայնքին կողմէ խօսք առաւ Սամուէլ Մկրտիչեան: Ան իր գոհունակութիւնը յայտնեց Հ.Մ.Ը.Մ.ի մեծ ընդամենը միացման համար եւ խոստացաւ համայնքի երիտասարդութեան եւ պատանեկութեան կարելիութիւնները ի սպաս դնել միութեան առաքելութեան կենսագործման ի խնդիր:

Յաջորդեց պատասխանատու մարմնի ընտրութիւն: Միաշայնութեամբ և նորաստեղծ մասնաճիւղի անդրադասի վարչութեան անդամներ ընտրուեցան էր. Սամուէլ Մկրտիչեան (ապեկապետ), քոյր Աննա Սարգսեան (քարտուղար), էր. Ռոման Գրիգորեան, քոյր Լարիսա Խաչատրեան եւ քոյր Մարինա Մանուէլեան (խորհրդակցականներ):

Այնուհետեւ, Հ.Մ.Ը.Մ.-Հ.Ա.Ս.Կ.ի երկու խմբապետներու առաջնորդութեամբ տեղի ունեցաւ 14 քոյր-եղբայրներու երէցական երդման արարողութիւն եւ փողկապներու փոխանցում:

Հ.Մ.Ը.Մ.ի Կեդրոնական Վարչութեան պատուիրակութեան Թիֆլիսի այցելութեան ընկերացան Հ.Մ.Ը.Մ.-Հ.Ա.Ս.Կ.ի սկաուտ երկու խմբապետներ:

Նորաստեղծ մասնաճիւղին հիմնադիր ժողովը սկսաւ Կեդրոնական Վարչութեան անդամ էր. Բագրատ Եսայեանի ողջոյնի խօսքով: Ապա, Կեդրոնական Վարչութեան ապեկապետ էր. Գառնիկ Մկրտիչեան խօսեցաւ Հ.Մ.Ը.Մ.ի Թիֆլիսի մէջ ծառայելիք գործին

ՀԱՂՈՐԴԱԳԻՐՈՒԹԻՒՆ Հ.Մ.Ը.Մ.Ի ԿԵԴՐՈՆԱԿԱՆ ՎԱՐՉՈՒԹԵԱՆ Ա. ԼԻԱԳՈՒՄԱՐԻ



Հ.Մ.Ը.Մ.ի նորընտիր Կեդրոնական Վարչութիւնը իր քառամեայ նստաշրջանի (2015-2019) առաջին լիազուգումարին նիստերը կատարեց 6-8 Դեկտեմբեր 2015-ին, Երեւանի մէջ:

Ժողովը գլխաւորաբար կեդրոնացաւ Հ.Մ.Ը.Մ.ի Պատգամաւորական 11-րդ Ընդհանուր Ժողովի որոշումներուն եւ առաջարկներուն գործադրութեան վրայ:



ԽՄԲԱԳՐԱԿԱՆ
Իրարմով հզօր

2-3

ԿԱԶՄԱԿԵՐՊԱԿԱՆ

6-7

ԱՅՑԵԼՈՒԹԻՒՆ

8

ԱՆԴՐԱԴԱՐՁ

9-10

ՄԱՍՆԱԾԻԴԷ ՄԱՍՆԱԾԻՂ

11-37



ՄԱՆԿԱՊԱՏԱՆԵԿԱՆ

38-39



ԿԵԴՐ. ՎԱՐՉՈՒԹԻՒՆԸ
ԵՐԵՒԱՆԻ ՄԷՉ

- 4 Սփիւռքի նախարարին մօտ
- 4 Մարմնակրթութեան եւ երիտասարդութեան հարցերու նախարարին մօտ
- 5 Ամենայն Հայոց Գարեգին Բ. կաթողիկոսին մօտ
- 5 Պաշտպանութեան նախարարին մօտ
- 5 Ազգային Ողիմպիական Կոմիտէի նախագահին մօտ

Marzig sports magazine is published by Homenetmen Central Committee-Sevan Building, Rue 77, Sector 4, Bourj Hammoud, Beirut, Lebanon. Tel: 9611248043, Fax: 9611260117, E-mail: marzig@Homenetmen.org, P.O.Box: 80486 Bourj Hammoud, Lebanon, www. Homenetmen.org

Խմբագիր: Վիգէն Աւագեան **Խմբագրական կազմ:** Մարո Բէշիշեան, Սեւան Նազարեան, Տիրան Շահինեան
Վարչական կազմ: Պարրիկ Կիլպէնկեան, Գրիգորիս Պողարեան, Արօ Մոսիկեան
Էջադրում եւ ընդհանուր շեւաւորում: Արշօ Պալեան, **Կողքի պատրաստութիւն:** Y Concept International, **Գրաշարութիւն:** Շողիկ Պոյաճեան, **Հրատարակութեան պատրաստութիւն:** Photogravure Paklayan, **Հրատարակութիւն:** Համազգայինի «Վահէ Սէթեան» տպարան, Պէյրութ, Լիբանան:
Բաժանորդագրութիւն: «Մարզիկ» կը հասնի աշխարհի 30 երկիրներու բաժանորդներու: Տարեկան բաժանորդագրութեան սակ ճշդուած է՝ Լիբանան 32 \$, Միջին Արեւելեան եւ Եւրոպական երկիրներ 70 \$, Մ. Նահանգներ եւ Աւստրալիա 75 \$: Լիբանանի մէջ թերթին հարստացման սակն է 4000 լ.ո.: **Ցրում:** «Մարզիկ»ի ցրումը Լիբանանի մէջ կը կատարուի յարուկ ցրուիչով (հեռ. 71/239209): Թերթը կարելի է ստանալ նաեւ «Համազգային»ի գրախանութէն: Լիբանանէն դուրս թերթը կը ստացուի «Liban post»ի միջոցով: **Ծանուցումներ:** «Մարզիկ»ի մէջ ծանուցելու համար դիմել թերթին վարչական կազմին (Հեռ: 9611248043):

ԻՐԱՐՄՈՎ ՀԶՕՐ

(Հ.Մ.Ը.Մ.Ի ԹԻՖԼԻՍԻ ՄԱՍՆԱԾԻՒՂԻՆ ՀԻՄՆԱԴՐՈՒԹԵԱՆ ԱՌԻԹՈՎ)

Հ.Մ.Ը.Մ.ի իրաքանչիւր նոր մասնաճիւղի հիմնադրութիւն գոհունակութեան եւ հրպարտութեան առիթ է, որովհետեւ անցուցանիշն է միութեան յաղթանակին ընդդէմ՝ ձուլումին, այլասերումին եւ օտարացումին: Հ.Մ.Ը.Մ.ի դերն ու առաքելութիւնն է այդ. ամենուրեք արմատներ նետել, մեծնալ, բազմանալ, հզօրանալ, հայանալ եւ հայացնել:

Հ.Մ.Ը.Մ.ը հայացնող միութիւն է: Աշխարհասփիւռ հին թէ նոր գաղութներ Հ.Մ.Ը.Մ.ի կարօտովը կ'ապրին, որովհետեւ գիտեն, որ Հ.Մ.Ը.Մ.ի ներկայութեամբ իրենց մատղաշ սերունդները ապահովագրուած են տեսակ-տեսակ մոլութիւններու եւ ապազգայնացնող երեւոյթներու դէմ: Հ.Մ.Ը.Մ.ը կարեւոր պատնէշ մըն է մեր վտանգուած գոյութեան դէմ: Իր հայկական մթնոլորտով եւ հայաշունչ ոգեւորութեամբ ան մարմնակրթանքէ աւելի հոգեկրթանք կը կատարէ: Հայեցի ոգի կը ջանքէ, պատմութիւն եւ մշակոյթ կը փոխանցէ՝ ազգային ժառանգութեան մը հաւատարիմ պահապանը հանդիսանալով:

Սակայն, ինչպէս ամէն օրէնք, այս հաստատումը եւս ունի իր բացառութիւնը:

Միութիւնը նաեւ ի՛նք կը հայանայ եւ հայեցի շունչով կը ջերմանայ, երբ արմատ կը նետէ ազգային պարարտ հողի վրայ: Հ.Մ.Ը.Մ.ի Հայաստանի մասնաճիւղերը այդ կը վկայեն՝ Երեւանէն մինչեւ Էջմիածին, Հրազդան, Չարենցաւան, Գիւմրի, Մարտունի եւ այլուր: Այդ կը վկայեն նաեւ Վրաստանի հայաբնակ Ախալքալաքի եւ Ախալցխայի մասնաճիւղերը, որոնց կը միանայ չքնաղ Թիֆլիսը՝ Հ.Մ.Ը.Մ.ի իր նորաստեղծ մասնաճիւղով:

Թիֆլիսը Հ.Մ.Ը.Մ.ական մարդուն համար եղած է ու կը մնայ կտոր մը հայրենիք՝ հայրենիքէն դուրս, դարատր անցեալի իր անկրկնելի փառքով, տխուր թէ ուրախ յիշատակներով:

Արդարեւ՝

Թիֆլիսը հայութեան համար Վահան Չերազի կառնափնարանն է, ուր Բերիան մահուամբ պատժած է հայ սկստութեան «դաշնակ» գործիչը: Ան Մետելի տխրահռչակ բանտն է եւ Խոջեվանքի ազգային պանթոնը:

Թիֆլիսը Սայաթ Նովայի Հաւլաբարն է, Թումանեանի Վերնատունն է, Ղազարոս Աղայեանի եւ Սերգէյ Փարաճանովի ստեղծագործական հայրենիքը:

Թիֆլիսը Հ.Մ.Ը.Մ.ականին համար աւելին է՝ քան սովորական հայաշատ որեւէ քաղաք: Ան արեւելահայ մտատրականութեան երբեմնի կեդրոնն է, ուր ազգային մշակոյթը իր ծաղկումը ապրած է Բաֆֆիով եւ Արծրունիով, Ծերենցով ու Մուրացանով, Սունդուկեանով եւ Պոօշեանով:

Թիֆլիսը հայ լուսատրութեան օճախ Ներսիսեան վարժարանն է եւ Գայանեան աղջկանց վարժարանը: Մեր մարդկային եւ ազգային գիտակցութիւնը արթնցնող հրապարակագրութեան քաղաքն է ան՝ բազմատասնեակ իր թերթերով, որոնց լուսապսակը կը կազմեն «Մշակ»ն ու «Հորիզոն»ը, «Յառաջ»ն ու «Դրօշակ»ը:

Թիֆլիսը ինը հայ քաղաքապետներու մայրաքաղաքն է, ուր իրենց քաղաքական տաղանդը երկրի զարգացման ի սպաս դրած են Մատինեաններ, Իգմիրլեաններ եւ Խատիսեաններ: Հայութեան աշխատասիրութեան եւ բարերարութեան հոմանիշները ապրած ու գործած են Թիֆլիսի մէջ՝ Մանթաշեաններէն մինչեւ Արամեաններ, Լալայեաններէն մինչեւ Աֆրիկեաններ:

Եւ դեռ, հայ ազատագրական շարժման աննման հնոցն է Թիֆլիսը՝ իր «Մշեցի բանուորներու խումբ»ով եւ «Երիտասարդ Հայաստան»ով, «Դրօշակ»ով եւ «Ժողովրդական կամք»ով: «Հայկական նոր ասպետութեան»՝ Հայ Յեղափոխական Դաշնակցութեան





օրրանն է Թիֆլիսը եւ ազգային-կուսակցական գործունեութեան անոր վառ դարբնոցը:

Այս բոլորն է Թիֆլիսը, հայ մարդուն հայաբոյր եւ հայադրոշմ ուստանը, որուն պատմութեան հազարամէկ դրուագները ազգային յիշողութեան եւ ժառանգութեան մէկական գանձեր են, իբրեւ նուիրական անցեալի մը փայլուն էջեր:

Հ.Մ.Ը.Մ.ը Թիֆլիսի անցեալէն առնելիք մը ունի անպայման եւ տալիք մը ունի անոր ներկային: Հ.Մ.Ը.Մ.ը կը մեծնայ Թիֆլիսի ազգային շունչով, կը գօտեպնդուի թիֆլիսեցի Հ.Մ.Ը.Մ.ականներու յաջողութիւններով

եւ, իր կարգին, համահայկական իր ընտանիքը կը պատուաստէ Թիֆլիսեան պատմական փորձառութեամբ:

Այսպէս, Հ.Մ.Ը.Մ.ն ու Թիֆլիսը իրարմով կը զօրանան եւ իրարու կը կապուին անքակտելի այն ուխտով, որուն աւանդապահը կը մնայ Հ.Մ.Ը.Մ.ի նորաստեղծ մասնաճիւղը:

Բարի երթ Հ.Մ.Ը.Մ.ի Թիֆլիսի մասնաճիւղին:

Վահան Չերազի աճիւնները այժմ կրնան անխոտ՝ վհանգչիլ:

Հ.Մ.Ը.Մ.Ի ՇՐՋԱՆՆԵՐ, ՄԱՍՆԱՃԻՒՂԵՐ, ՄԻԱԲՈՐՆԵՐ

Հայաստան: Երեւան, Մալաթիա, Ձէյթուն, Կոմիտաս, Էրէրունի, Արուսեան, Չարենցաւան, Հրազդան, Արմաիր, Էջմիածին, Մարտունի/Չօրաքար, Մարտունի/Ճովիկար, Գիւմրի, Վերի. **Վրաստան:** Ախալքալաք, Ախալցխա, Թիֆլիս. **Ռուսիա:** Մոսկուա. **Լիբանան:** Պէյրութ, Չախլէ, Թրիպոլի, Պուրճ Համուր, Այնճար, Ծիւնի, Անթիլիաս, Ժրտէյրէ, Պաուշրիէ, Ռատուրա. **Սուրիա:** Հալէպ, Դամասկոս, Լաթաքիա, Գամիշլի, Քեսապ. **Յորդանան:** Ամման. **Պաղեստին:** Երուսաղէմ, Հայֆա, Եաֆա. **Եգիպտոս:** Գահիրէ, Աղեքսանդրիա. **Իրաք:** Պաղատար, Մուսուլ. **Քուէյթ:** Քուէյթ. **Կիպրոս:** Նիկոսիա. **Յունաստան:** Աթէնք, Գոթիկիա, Սելանիկ. **Անգլիա:** Լոնդոն. **Աստորիա:** Վիեննա. **Ֆրանսա:** Փարիզ, Վալանս, Մարսէյ. **Հոլանդիա:** Ալմելո, Ալքմար, Առնհեմ. **Գերմանիա:** Միւնիխ. **Շուէդ:** Սթոքհոլմ, Վեստերոս, Ստրեքթելիա. **Պուլիարիա:** Սոֆիա, Ռուսէ, Փլովրիփ, Վառնա, Շումէն, Պուրկաս, Տոպրիչ. **Գանատի:** Մոնթրէալ, Համիլթըն, Թորոնթօ, Քէնպրիճ, Սէնթ Գաթրինգ, Լաւալ. **Արեւմտեան Մ. Նահանգներ:** Լոս Անճելըս, Սան Ֆրանսիսքօ, Ֆրեզնօ, Մոնթրէալլօ, Փասսատիկա, Կլէմպէյլ, Օրէնճ Բաուսթի, Սան Ֆեռնանտօ, Սան Տիէյօ, Ինչընըր Էմիլայր, Սանթա Գլարա, Բրեսթըն Հոլիփ, Պրայէնք, Լաս Վեկաս, Ֆինիքս, Ուոլնաթ Բրիք, Նորթ Հոլիվուդ. **Արեւելեան Մ. Նահանգներ:** Ուաշինկթըն, Պոսթըն, Նիւ Եորք, Շիքակօ, Ֆիլադելֆիա, Տիքսոն, Փրովիդընս, Ֆլորիդա, Ալպընի, Շարլոթ. **Հարաւային Ամերիկա:** Պուէրթօ Այրէս, Գորյոպա, Մոնթեվիդէօ. **Աստորիա:** Սիւրնի («Անդրանիկ»), Սիւրնի («Արար»), Սիւրնի («Կամք»), Սիւրնի («Արարար»), Մելպուռն.

Հ.Մ.Ը.Մ.Ի ԿԵԴՐՈՆԱԿԱՆ ՎԱՐՋՈՒԹԵԱՆ ՏԵՍԱԿՑՈՒԹԻՒՆՆԵՐԸ ԵՐԵՒԱՆԻ ՄԷՋ

Հ.Մ.Ը.Մ.Ի նորընտիր Կեդրոնական Վարչութիւնը իր առաջին լիազուգումարի օրերուն, 6-8 Դեկտեմբեր 2015-ին, Երեւանի մէջ տեսակցութիւններ ունեցաւ Հայաստանի Հանրապետութեան Սփիւռքի, մարմնակրթութեան ու երիտասարդութեան հարցերու, պաշտպանութեան նախարարներուն, Ամենայն Հայոց Գարեգին Բ. Կաթողիկոսին եւ Հայաստանի Ազգային Ողիմպիական Կոմիտէի նախագահ Գագիկ Ծառուկեանին հետ:

ՍՓԻՒՌՔԻ ՆԱԽԱՐԱՐԻՆ ՄՕՏ

Տեսակցութիւններու շարքը սկսաւ Երեքաբլթի, 8 Դեկտեմբերին, Սփիւռքի նախարար Հրանոյշ Յակոբեանի տրուած այցելութեամբ:

Հ.Մ.Ը.Մ.Ի Կեդրոնական Վարչութեան անդամները ողջունելով, Յակոբեան գնահատեց Հ.Մ.Ը.Մ.Ի Կեդրոնական Վարչութեան եւ միութեան բոլոր անդամներուն հայրենանուէր աշխատանքը, նաեւ՝ երիտասարդութիւնը հայ պահելու համար ի գործ դրուած ջանքերը:

Իր կարգին, Կեդրոնական Վարչութեան ատենապետ եղբ. Գառնիկ Մկրտիչեան շնորհակալութիւն յայտնեց նախարարին՝ Հ.Մ.Ը.Մ.Ի-ին իր մնայուն աջակցութեան համար եւ ներկայացուց նորընտիր Կեդրոնական Վարչութեան կազմը: Ան վստահեցուց, որ Հ.Մ.Ը.Մ.Ի-ը անշեղօրէն լծուած է միութեան նպատակին իրագործման՝ հայ երիտասարդները առողջ դաստիարակութեամբ ջամբել եւ անոնց մէջ հայութեան եւ Հայաստանին հանդէպ հայրենասիրութեան, պատասխանատուութեան եւ ծառայասիրութեան զգացումը ամրապնդել:

Տեսակցութեան ընթացքին քննարկուեցան Հ.Մ.Ը.Մ.Ի Կեդրոնական Վարչութեան յառաջիկայ քառամեակի ծրագիրները, որոնք պիտի իրականացուին հայրենիքի եւ Սփիւռքի մէջ: Անդրադարձ կատարուեցաւ Սփիւռքի նախարարութեան եւ Հ.Մ.Ը.Մ.Ի-ին միջեւ գործակցութեան զարգացման եւ ամրապնդման առնչուած հարցերու: Շեշտը դրուեցաւ նաեւ միութեան 100-ամեակը արժանաւորապէս նշելու ծրագիրներուն եւ այդ ուղղութեամբ համագործակցութեան կարելիութիւններուն վրայ:



ՄԱՐՄՆԱԿՐԹՈՒԹԵԱՆ ԵՒ ԵՐԻՏԱՍԱՐԴՈՒԹԵԱՆ ՀԱՐՑԵՐՈՒ ՆԱԽԱՐԱՐԻՆ ՄՕՏ

Նոյն օրը, Հ.Մ.Ը.Մ.Ի Կեդրոնական Վարչութիւնը այցելեց նաեւ Հայաստանի մարմնակրթութեան եւ երիտասարդութեան հարցերու նախարար Գաբրիէլ Ղազարեանին:

Տեսակցութեան ընթացքին տեղի ունեցաւ փոխադարձ ծանօթացում, որմէ ետք ներկայացուեցան յառաջիկայ քառամեակի ծրագիրներն ու երկկողմանի գործակցութեան կարելիութիւնները, մանաւանդ՝ համա-Հ.Մ.Ը.Մ.Ի-ական մարզախաղերու եւ բանակումի ընթացքին:

Նախարար Ղազարեան իր գոհունակութիւնը յայտնեց Հ.Մ.Ը.Մ.Ի-ին՝ մարմնակրթական ծրագիրներու ճամբով երիտասարդութեան ի խնդիր կատարուող աշխատանքներու արդիւնաւէտութեան եւ կարեւորութեան համար: «Մեր նախարարութիւնը սերտօրէն կը համագործակցի Հ.Մ.Ը.Մ.Ի-ին հետ ո՛չ միայն մարմնակրթութեան, այլ նաեւ՝ երիտասարդներու համար իրականացուող ծրագիրներու ընդմէջէն, եւ այդ համագործակցութեան տուած դրական արդիւնքները տարուէ տարի աւելի տեսանելի են բոլորին», նշեց նախարարը:

Հ.Մ.Ը.Մ.Ի Կեդրոնական Վարչութեան ատենապետ եղբ. Գառնիկ Մկրտիչեան շնորհակալութիւն յայտնեց նախարար Ղազարեանին՝ ջերմ ընդունելութեան համար եւ մանրամասնութիւններ փոխանցեց 26 երկիրներու մէջ գործող 105 մասնաճիւղներու գործունէութեան մասին: «Հայաստանի մարմնակրթութեան եւ երիտասարդութեան հարցերու նախարարութեան եւ Հայ Մարմնակրթական Ընդհանուր Միութեան համագործակցութիւնը կարելի է հայապահպանման լաւ օրինակ նկատել», նշեց եղբայր Մկրտիչեան:



ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ ԳԱՐԵԳԻՆ Բ. ԿԱԹՈՂԻԿՈՍԻՆ ՄՕՏ

Յաջորդ օր, Չորեքշաբթի, 8 Դեկտեմբերին, Հ.Մ.Ը.Մ-ի նորընտիր Կեդրոնական Վարչութիւնը տեսակցութիւններու իր շարքը սկսաւ էջմիածին այցելութեամբ:

էջմիածինի մէջ, Հ.Մ.Ը.Մ-ի պատուիրակութիւնը տեսակցեցաւ Ամենայն Հայոց Գարեգին Բ. Կաթողիկոսին հետ: Այս առթիւ, Կեդրոնական Վարչութեան ատենապետ եղբ. Գառնիկ Մկրտիչեան ներկայացուց Կեդրոնական Վարչութեան անդամները եւ փոխանցեց միութեան քառամեայ գործունէութեան ծրագիրները, շեշտը դնելով Հ.Մ.Ը.Մ.-եկեղեցի անքակտելի կապին վրայ:

Իր կարգին, Վեհափառը իր գնահատանքը փոխանցեց Հ.Մ.Ը.Մ-ին՝ հոգեւոր եւ հայապահպանման մարզերուն մէջ իր ի գործ դրած ջանքերուն համար, նշելով որ թեմական առաջնորդներու ճամբով ան կը հետեւի միութեան գործունէութեան: Գարեգին Բ. հաստատեց, որ մարզական եւ ըսկառտական աշխատանքներու ճամբով սփիւռքահայ պատանին ու երիտասարդը հայ պահելու առաքելութիւնը նուիրական է: Այս առիթով ան իր քաջալերանքն ու օրհնութիւնը փոխանցեց նորընտիր Կեդրոնական Վարչութեան:

Եղբ. Մկրտիչեան Վեհափառ Հօր տեղեկութիւններ տուաւ միութեան 100-ամեակին առիթով՝ 2018-ին Հայաստանի մէջ կատարուելիք հանդիսաւոր տօնակատարութեան մասին: Հ.Մ.Ը.Մ.-Հ.Ա.Ս.Կ-ի ատենապետ եղբ. Հրաչ Շմաւոնեան, իր կարգին, փոխանցեց 2016-ին Հայաստանի մէջ տեղի ունենալիք միջազգային սկառտական սեմինարին մանրամասնութիւնները՝ յայտնելով, որ այս նախաձեռնութեան առաջադրանքներէն է Հայաստանը ծանօթացնել օտար սկառտներու:

ՊԱՇՏՊԱՆՈՒԹԵԱՆ ՆԱԽԱՐԱՐԻՆ ՄՕՏ

Այնուհետեւ, Հ.Մ.Ը.Մ-ի Կեդրոնական Վարչութիւնը տեսակցութիւն մը ունեցաւ Հայաստանի պաշտպանութեան նախարար Սէյրան Օհանեանի հետ, պաշտպանութեան նախարարութեան համալիրին մէջ:

Նախարար Սէյրան Օհանեան գնահատանքով արտայայտուեցաւ Հ.Մ.Ը.Մ-ի դերակատարութեան մասին՝ հայապահպանման, յատկապէս պատանիններու եւ երիտասարդներու

հայրենասիրական դաստիարակութեան գործին համար եւ ընդգծեց, որ միութեան ծաւալած գործունէութիւնը իրաւամբ Հայաստան-Սփիւռք գործակցութեան լաւագոյն օրինակներէն է:

Հ.Մ.Ը.Մ-ի Կեդրոնական Վարչութեան ատենապետ եղբ. Գառնիկ Մկրտիչեան շնորհակալութիւն յայտնեց ընդունելութեան եւ միութեան գործունէութեան աջակցութեան պատրաստակամութեան համար՝ նշելով, որ հայրենիքին հետ կապը աւելի եւս ամրապնդելու եւ հայրենիքին շուրջ համախմբուելու ծրագիրները միշտ առկայ են: Ան նշեց, որ 2014-ին, պաշտպանութեան նախարարին ներկայութեամբ, «Վազգէն Սարգսեան» սպայից վարժարանին մէջ, համա-Հ.Մ.Ը.Մ.-ական բանակումի մասնակիցներուն տողանցքը անջնջելի կերպով դրոշմուած է բոլորին միտքերուն եւ սիրտերուն մէջ:

Տեսակցութեան երկրորդ մասով քննարկուեցան պաշտպանութեան նախարարութեան եւ Հ.Մ.Ը.Մ-ի միջեւ գործակցութեան կարելիութիւնները:

ԱԶԳԱՅԻՆ ՈՂԻՄՊԻԱԿԱՆ ԿՈՄԻՏԷԻ ՆԱԽԱԳԱՀԻՆ ՄՕՏ

Հ.Մ.Ը.Մ-ի Կեդրոնական Վարչութեան տեսակցութիւններու շարքին վերջինը կատարուեցաւ Հայաստանի Ողիմպիական Կոմիտէի նախագահ Գագիկ Ծառուկեանի հետ:

Գագիկ Ծառուկեան իր շնորհաւորութիւնները փոխանցեց նորընտիր Կեդրոնական Վարչութեան՝ գնահատելով հայրեն



Հ.Մ.Ը.Մ. - Հ.Ա.Ս.Կ.ի վարչութեան հետ:

նիքի հանդէպ Հ.Մ.Ը.Մ-ի կապուածութիւնը: Ան նշեց, որ մարզախաղերու եւ բանակուծներու ճամբով հայ պատանին ու երիտասարդը հայրենիքին ծանօթացնելու աշխատանքը

հայապահպանման դաստիարակիչ միջոցներէն մէկն է, որուն պատրաստ է ինք իր օժանդակութիւնը բերելու:

ՀԱՂՈՐԴԱԳՐՈՒԹԻՒՆ Հ.Մ.Ը.Մ-Ի ԿԵԴՐՈՆԱԿԱՆ ՎԱՐՉՈՒԹԵԱՆ Ա. ԼԻԱԳՈՒՄԱՐԻ

Շարունակուած՝ Բ. Կողքէն

Կեդրոնական Վարչութիւնը քննարկեց յառաջիկայ քառամեակի իր աշխատելաոճի ուղղութիւնները եւ աշխատանքներու ծրագրման ու հետապնդման բաժանում կատարեց իր անդամներուն միջեւ:

Ժողովը կեդրոնացաւ այս քառամեակին գուզադիպող (2018-ին) միութեան 100-ամեակը արժանաւորապէս նշելու ծրագիրներուն վրայ՝ մարզական, սկաուտական եւ կազմակերպական բնագաւառներու մէջ:

Քննարկուեցաւ նաեւ Շրջանային եւ Մեկուսի շրջաններու կազմակերպական գործունէութիւնը: Կեդրոնական Վարչութիւնը բիւրեղացուց իր մասնաճիւղերուն թիւը՝ վերցնելով այն մասնաճիւղերը, որոնք կազմալուծվիճակի մէջ եղած են տարիներ շարունակ: Յետ բիւրեղացման, յստակացաւ, որ Հ.Մ.Ը.Մ-ի աշխարհասփիւռ մասնաճիւղերուն թիւը 105 է:

Կեդրոնական Վարչութիւնը անդրադարձաւ Եւրոպայի, Վրաստանի եւ Ռուսաստանի

մէջ նոր կազմաւորուող շրջաններու կազմակերպական իրավիճակին: Լուսարձակի տակ առնուեցաւ 9 Դեկտեմբեր 2015-ին Թիֆլիսի մէջ Հ.Մ.Ը.Մ-ի մասնաճիւղի մը հիմնադրութիւնը եւ այս առիթով խմբապետական գործողումներու նախաձեռնելու անհրաժեշտութիւնը: Մոսկուայի Մեկուսի շրջանը վերաշխուժացնելու կարելիութիւնները արծարծուեցան ու որոշուեցաւ գործողումներով վերսկսիլ աշխատանքի:

Յառաջիկայ քառամեակի առաջնահերթութիւններէն մէկը նկատուեցաւ

մշակումը դաստիարակչական ծրագիրներու, որոնք պիտի նպատակադրեն զարգացնել եւ միութեանական ոգին զօրացնել միութեան շարքերուն մէջ:

Սկաուտական ծիրին մէջ, շեշտը դրուեցաւ սկաուտական գիրքերու այժմէականացման եւ արդի արհեստագիտութեան համապատասխանող տարբերակներ ունենալու հրամայականին վրայ: Անհրաժեշտ նկատուեցաւ քոյր մասնաճիւղերու դրութեան աշխատանքը նոր մօտեցումով զարգացնելը եւ միջազգային սկաուտական ծրագիրներու մէջ Հ.Մ.Ը.Մ-ականներու մասնակցութիւնը ապահովելը:

Տնտեսական բաժինով քննարկուեցան քառամեայ ծրագիրներու յաջողութեան համար նիւթականի ապահովման կարելիութիւնները՝ տընտեսական ծրագիրներու ճամբով:

Մարզական բաժինով անդրադարձ կատարուեցաւ համա-Հ.Մ.Ը.Մ-ական 10-րդ մարզախաղերու իրականացման համար ընձեռուած կարելիու-



Թիւններուն՝ մանաւանդ որ կը նախատեսուի մասնակիցներու թիւի յաւելում՝ նկատի ունենալով շրջաններուն մէկէ աւելի խումբերով ներկայանալու Պատգամաւորական Ժողովի որոշումը: Նաեւ որոշուեցաւ կեդրոնանալ շրջաններուն միջեւ մարզական ոգիի ամրապնդման վրայ:

Արհեստագիտական տեղեկատուութեան քառամեակին իրագործումները, որոշուեցաւ շարունակել «Կուկըլ»ի հետ համագործակցութիւնը եւ կեդրոնանալ համացանցի կայքի եւ ընկերային ցանցերու միջոցով Հ.Մ.Ը.Մ.ի աշխարհասփիւռ գործունէութեան տեղեկատուութիւնը փոխանցելու անհրաժեշտութեան վրայ:

«Մարզիկ» պաշտօնաթերթին գծով որդեգրուած որոշումներու քննարկման լոյսին տակ, ծրագրուեցաւ եռամսեայ տպագրական թիւի կողքին, «Մարզիկ»ի ելեկտրոնային տարբերակը ունենալ եւ ընկերային ցանցերու եւ համա-

ցանցի կայքին միջոցով թերթը երկլեզու դրութեամբ հասանելի դարձնել կարելի եղածին չափ մեծաթիւ ընթերցողներու:

Կեդրոնական Վարչութեան ուշադրութեան առարկան դարձաւ նաեւ Հ.Մ.Ը.Մ.ի Սուրիոյ մասնաճիւղերուն դժուար իրավիճակը՝ քաղաքական եւ ապահովական պայմաններու բերումով: Բարոյական եւ շրջաններու միջոցով նիւթական օժանդակութիւններու փոխանցումը անհրաժեշտութիւն նրկատուեցաւ այս հանգրուանին:

Վարչական անդամներ պատրաստելու եւ զանոնք աշխատանքի մղելու պարագան կազմակերպական առաջնահերթութիւն նկատելով՝ վարչութիւնը որոշեց անյապաղ ծրագրել եւ գործադրել միջ-դիւանական խորհրդաժողով:

Ռազմավարական ծրագրաւորումի նախապէս որդեգրուած պատկերացումը պիտի գործնականացուի Կեդրոնական Վարչութեան աշխատանքային տարբեր բնագաւառներուն մէջ՝ ծրագրելով միշտ այժմէականացնելու եւ փորձառութեան հիման վրայ բարեփոխում-

ներ կատարելու անհրաժեշտութիւնը նկատի ունենալով:

Կեդրոնական Վարչութիւնը յստակացուց քառամեայ գործունէութեան ժամանակաշրջանի իր ծրագիրներուն ժամանակացոյցը՝ հետեւեալ ձեւով.-

- Համա-Հ.Մ.Ը.Մ.ական խմբապետական 7րդ համագումար- Յուլիս 2016:
- Միջ-դիւանական 9-րդ խորհրդաժողով- Հոկտեմբեր 2016:
- Համա-Հ.Մ.Ը.Մ.-ական 10-րդ մարզախաղեր- Յուլիս-Օգոստոս 2017:
- Միութեան 100-ամեակի հանդիսաւոր նշում- 2018:
- Համա-Հ.Մ.Ը.Մ.-ական 11-րդ բանակում- Օգոստոս 2018:
- Պատգամաւորական 12-րդ Ընդհանուր Ժողով- Սեպտեմբեր 2019:

Երեւան, 10 Դեկտեմբեր 2015

Հ.Մ.Ը.Մ.Ի ԿԵԴՐՈՆԱԿԱՆ ՎԱՐՉՈՒԹԻՒՆ

The Champs Élysées just steps away and the Parc Monceau nearby

HOTEL

★ ★ ★

PAVILLON MONCEAU

PARIS

Full of charme,
Tastefully decorated 36 rooms and 6 suites with individual heating / air conditioning, direct access telephone line, internet connection, minibar, safety box and satellite TV. Private bathroom with hairdryer. The suites can accommodate 3 adults or a family with parents and 2 children.

43 rue Jouffroy d'Abbans 75017 Paris
Tel 331 56 79 25 00 - Fax 331 42 12 99 38
infos@pavillon-monceau.com
www.pavillon-monceau.com

Հ.Մ.Ը.Մ.Ի ՆՈՐԸՆՏԻՐ ԿԵԳՐՈՆԱԿԱՆ ՎԱՐՉՈՒԹԵԱՆ ԱՅՑԵԼՈՒԹԻՒՆՆԵՐԸ ՀԱՅ ՀՈԳԵՒՈՐ ՊԵՏԵՐՈՒՆ



Տանամեակներու զեղեցիկ աւանդութեամբ մը, Հ.Մ.Ը.Մ.Ի իւրաքանչիւր նոր Կեդրոնական Վարչութիւն քառամեայ իր գործունէութիւնը կը սկսի Հայ հոգեւոր պետերու այցելութեամբ եւ անոնց օրհնութեան արժանացումով:

Հ.Մ.Ը.Մ.Ի նորընտիր Կեդրոնական Վարչութիւնը եւս հաւատարիմ այս աւանդութեան, Շաբաթ, 7 Նոյեմբեր 2015-ին, նստավայրի իր եղբայրներու պատուիրակութեամբ այցելեց Մեծի Տանն Կիլիկիոյ Արամ Ա. Վեհափառ Հայրապետին՝ 2015-2019 քառամեակի սկիզբը անոր Հայրական օրհնութիւնը ստանալու համար: Պատուիրակութեան մաս կազմեցին եղբայրներ Գառնիկ Մկրտիչեան, Րաֆֆի Կէվօղլանեան, Վաչէ Նաճարեան եւ Իշխան Եղիայեան:

Այցելութեան ընթացքին մանրամասնութիւններ փոխանցուեցան Հ.Մ.Ը.Մ.Ի 11-րդ Պատգամաւորական Ընդհանուր Ժողովին մասին եւ ներկայացուեցաւ նորընտիր Կեդրոնական Վարչութեան կազմը:

Վեհափառ Հայրապետը շեշտը դրաւ Հ.Մ.Ը.Մ.Ի առաքելութեան կարեւորութեան եւ հայեցի դաստիարակութեան ի խնդիր միութեան տարած բեղուն աշխատանքներուն վրայ: Ան Մեծի Տանն Կիլիկիոյ Կաթողիկոսութեան պատրաստակամութիւնը յայտնեց ժամհակելու Հ.Մ.Ը.Մ.Ին՝ քրիստոնէական դաստիարակութիւն ջամբելու առումով: Արամ Ա. Վեհափառ շեշտեց երիտասարդութեան դերակատարութեան կարեւորութիւնը մեր կեանքի բոլոր մարզերուն մէջ:

Կեդրոնական Վարչութեան անդամները, իրենց կարգին, շնորհակալութիւն յայտնեցին Վեհափառ Հօր եւ Մեծի Տանն Կիլիկիոյ Կաթողիկոսութեան թեմական բոլոր առաջնորդներուն՝ անոնց հայրական մօտեցումին համար: Անոնք ներկայացուցին Հ.Մ.Ը.Մ.Ի յառաջիկայ քառամեակի ծրագիրները՝ կարեւոր նկատելով դէպի 100-ամեակ յառաջացող այս միութեան դերակատարութիւնը թէ՛ հայրենիքի եւ թէ՛ Սփիւռքի տարածքին:

ՎԵՐ ԴՈՎՏ ՄԿՐՏԻԶ ԳԱՐԱԿԷՕԶԵԱՆԻ ՄՕՏ
Նոյն օրը, Հ.Մ.Ը.Մ.Ի Կեդրոնական Վարչութեան անդամները այցելեցին Մերձաւոր Արեւելքի Հայ Աւետարանական Եկեղեցիներու Միութեան նախագահ վեր. դոկտ. Մկրտիչ Գարակէօզեանին: Հանդիպումը փոխադարձ ծանօթացման առիթ մըն էր, որուն ընթացքին փոխանցուեցան Կեդրոնական Վարչութեան կազմին մասին տեղեկութիւններ եւ վերջին Պատգամաւորական Ընդհանուր Ժողովի աշխատանքներուն մանրամասնութիւնները:

Այցելութեան ընթացքին արծարծուեցան նաեւ նորընտիր Կեդրոնական Վարչութեան յառաջիկայ աշխատանքներուն պատկերացումը, եկեղեցի-Հ.Մ.Ը.Մ. անբակտեյի կապն ու յառաջիկայ համագործակցութեան կարելիութիւնները:

ԳՐԻԳՈՐ-ՊԵՏՐՈՍ Ի. ՊԱՏՐԻԱՐԻՆ ՄՕՏ

Ամիս մը ետք, 3 Դեկտեմբեր 2015-ին, Հ.Մ.Ը.Մ.Ի Կեդրոնական Վարչութեան պատուիրակութիւնը այցելեց Հայ Կաթողիկէ համայնքի հոգեւոր պետ՝ Գրիգոր-Պետրոս Ի. Պատրիարքին: Պատուիրակութիւնը Հ.Մ.Ը.Մ.Ի աշխարհասփիւռ ընտանիքին անունով շնորհաւորեց ամենապատիւ հոգեւոր տէրը իր ընտրութեան եւ գահակալութեան առիթով:

Այցելութեան ընթացքին ներկայացուեցան նորընտիր Կեդրոնական Վարչութեան եւ Հ.Մ.Ը.Մ.Ի աշխարհասփիւռ ընտանիքին մասին ընդհանուր տեղեկութիւններ: Հ.Մ.Ը.Մ.Ի յառաջիկայ քառամեակի ծրագիրներն ու առաջադրանքները ներկայացնելով՝ շեշտը դրուեցաւ միութեան եւ Հայաստանի Ա. Հանրապետութեան 100-ամեակի ծրագիրներուն առնչուող բաժիններուն վրայ, որոնք պիտի իրագործուին 2018-ին:

Իր կարգին, Գրիգոր-Պետրոս Ի. Պատրիարք արծարծեց երիտասարդութեան դիմագրաւած դժուարութիւնները եւ Հ.Մ.Ը.Մ.Ի առաքելութիւնը՝ նոր սերունդի հայակերտման ու հայապահպանման աշխատանքին մէջ:



ՓՎՐՔ Հ.Մ.Ը.Մ.ԻՆ

Սերոբ Սահակեան ԵՐՈՒՍԱՂԵՄ

Եթէ երէկ ինծի հարցնէիք, թէ արդեօք գիտե՞ս, թէ ուր կը գտնուի Առնհեմ քաղաքը կամ շրջանը, անպայման պիտի ըսէի չեմ գիտեր:

Չէի գիտեր նման քաղաքի մը գոյութեան մասին նոյնիսկ, այնուամենայնիւ, այժմ, շնորհիւ Հ.Մ.Ը.Մ.ին կը տեղեկանամ, թէ կայ նման քաղաք Առնհեմ անունով: Քաղաք, ուր վերջերս կազմուած է հայ գաղութ, համայնք, եկեղեցի, ու ահա Հ.Մ.Ը.Մ.ը եկած է հայ գաղութի գոյատեւման եւ պահպանման մէկ կարեւոր կոթողը կանգնեցնելու, առանձին մասնաճիւղ մը հիմնելու:

Կը գիտակցիմ հսկայական մարտահրաւէրին, կը գիտակցիմ նորակազմ գաղութի մը մէջ ուժերու մէկտեղումի դժուարին աշխատանքին, անոնց կազմակերպման ընթացքին, որոնց լրումը անպայման կը հետեւցնէ յաջողութեան մաղթանքներ, քաջալերանք եւ շնորհաւորութիւններ:

Այնուհետեւ պիտի խոստովանիմ, թէ զգացումներս խառն են, արդեօք մինչեւ ե՞րբ...: Չէ՞ որ այլեւս տուն պիտի վերադառնայինք, չէ՞ որ այլեւս գաղութները իբրեւ թիւ թէ շրջան պէտք է նուազէին: Չէ՞ որ այլեւս առաւել դպրոց մը, առաւել մանկանոց մը, առաւել մանկապարտէզ մը մենք պիտի ունենայինք Հրազդանի մէջ, Չարենցաւանի մէջ, թերեւս Ասկերանի մէջ: Չունեցա՞նք: Եւ ոչ միայն չունեցանք, այլ ընդհակառակը՝



չատերն ալ փակեցինք: Փակեցինք նաեւ Սփիւռքի տարածքին, նաեւ՝ Հայաստան: Սփիւռքի մէջ փակեցինք, որովհետեւ այդ դպրոցներուն իմաստն ու պահելու կարելիութիւնները չքացան, իսկ Հայաստանի տարածքին աշակերտ չմնաց, որովհետեւ ծնողքը իր աշակերտին ապագան տեսաւ ովկիանոսներէ անդին:

Վաղը պիտի նշենք մեր անկախացած հայրենիքին 25-ամեակը: ՓՎՐՔ Երկնաւորի, որ շնորհիւ մեր բանակին, հակառակ փոթորկոտ սահմանագիծերուն, անսասան Երեւանը հոն է դեռ, Շուշին հոն է, հեռաւոր հարաւը գտնուող Մեղրին դեռ կը սպասէ: Այսուհանդերձ, ազգ մը ամբողջ կամայ թէ ակամայ, երկիր թէ արտերկիր հողմն արած՝ աւագամրրկուած, երբեմն աւագախրուած, հոս ու հոն կը տատանի:

ՓՎՐՔ Հ.Մ.Ը.Մ.ին, որ տակաւին կը գտնէ ներուժը, մղումը, մարդը, տէ՛ր կանգնելու ազգին ցիրուցան, երբեմն մոլորած զաւակներուն, օրին տուն վերադարձնելու գերագոյն նպատակադրութեամբ:

Ալ չեմ գիտեմ, որ Առնհեմի այս մասնաճիւղը քանիտրորդն է Հ.Մ.Ը.Մ.ի աշխարհատարած ցուցակին մէջ, բայց քաջ գիտեմ, որ մինչեւ տուն դարձ, թափառական հայուն ցուպին առընթեր, նման մասնաճիւղերէն շատերը պիտի փակուին, շատերը պիտի բացուին եւ Հ.Մ.Ը.Մ.ը իր կոչումին հարազատ, պիտի գտնուի հոն, ուր կարիքը կը զգացուի:

Ուժ, կարողութիւն Հ.Մ.Ը.Մ.ին եւ անոր ներկայացուցչական ու գործող մարմիններուն:

ՍԱՐԴԱՐԱՊԱՏԻ ՎԵՐՐՆՉԻԻՂՈՒՄԸ

Սերոբ Սահակեան
ԵՐՈՒՍԱՂԵՄ

Աւելի քան քառասուն օր է Հալէպը ելեկտրականութենէ զուրկ է: Աւելի քան քառասուն օր է խմելիք ջուրէ զուրկ է, արտաքին աշխարհին հետ կապէ զուրկ է, անմիջական հացի ու այլ պէտքերու ձեռքբերումի կարելիութենէն զուրկ է, ալ չիօսինք ապահովութեան մասին, անակնկալ ռմբահարումներուն մասին, որոնք այս կեանք ըսուածը պէտք է դժոխք որակեն:

Այնուհետեւ, այս տեսարանը, որ կը վերաբերի Հալէպի, այո՛ այսօրուան Հալէպին, թիւ ու թուական՝ 10 Նոյեմբեր 2015, վայր՝ Հ.Մ.Ը.Մ.ի պարտէզ, ուր հաւաքուած են աւելի քան 350 եղբայրներ եւ քոյրեր, հանդիսատեսը ըլլալու իրենց զաւակներուն սկաուտական երդման արարողութեան:

Պարզ տրամաբանութիւնը չի կրնար բացատրել այս իրադարձութիւնը: Կարելի չէ ըմբռնել իրերու այն դրութիւնը, թէ ի՞նչպէս մարդս իր անմիջական առօրեայով այնքան ծանրօրէն բեռնաւորուած, դեռ ժամանակ կը գտնէ ակումբ երթալու, իր միութենական յարկը ներկայանալու եւ հոգիի ի՞նչ անդորրութեամբ զբաղելու սերունդներու պատրաստութեամբ, սկաուտներու աստիճանաւորումով:



Միայն Հ.Մ.Ը.Մ.ականը պիտի տար այս մէկուն բացատրութիւնը ու լայն ժպիտով պիտի ըսէր. ՍԱՐԴԱՐԱՊԱՏԸ ՊԱՏՄՈՒԹԻՒՆ է, բայց անոր «խենթեր»ուն զաղափարախօսական, մինչեւ իսկ ֆիզիքական վերընծիւղումը մինչեւ օրս առկայ է Հ.Մ.Ը.Մ.ի յարկին տակ, որուն վկայութիւնը այս «անհասկնալի» երդման արարողութիւնն է:

ՀԱՒԱՏԱՑԷՔ, ՅՈՒՍԱԽԱԲ ԶԷՔ ԸԼԼԱՐ...

Սերոբ Սահակեան
ԵՐՈՒՍԱՂԵՄ

Պահ մը մոռցէք Հ.Մ.Ը.Մ.ը, իբրեւ մարզական շարժում, Մոռցէք Հ.Մ.Ը.Մ.ը, իբրեւ որպէս սկաուտական շարժում, Մոռցէք զայն իբրեւ ուղղակի թէ անուղղակի զաղափարական տուն,

Այնուհետեւ, դուք պիտի ձայնակցիք ինծի, որ ան՝ Հ.Մ.Ը.Մ.ը, այս օրերուն, երբ մեր զաւակներուն իւրաքանչիւր քայլը ենթակայ է հազար ու մէկ փորձութեան, ենթակայ է սայթաքումներու, ենթակայ է հոգեւոր եւ, ինչու չէ նաեւ, ֆիզիքական կորուստի, Հ.Մ.Ը.Մ.ն է, որ իր աշխարհատարած

մասնաճիւղերով կը մնայ ամէնէն իրական ու գործնական թերեւս միակ պատուարը այդ բոլորին:

Հետեւաբար, մի սպասէք որ Հ.Մ.Ը.Մ.ը ձեզի մօտենայ եւ հրաւեր կարդայ ձեր զաւակները իր ակումբները ուղարկելու, այլ՝ դուք առէք ձեր զաւակները եւ զանոնք յանձնեցէք Հ.Մ.Ը.Մ.ի հովանիին՝ «Միսը ձեզի, ոսկորը մեզի»ի ըմբռնումով: Հաւատացէք, յուսախաբ չէք ըլլար, այլ՝ ամբողջ կեանք մը երախտագիտութեամբ կը յիշէք այն օրը, որ ձեր զաւակը մուտք գործեց Հ.Մ.Ը.Մ.ի յաճախ անշուք պատերէն ներս, ուր հպարտօրէն Հ.Մ.Ը.Մ.ական ընտանիքն է կանգնած:



Հ.Մ.Ը.Մ.Ի ՆՈՐ ՄԱՍՆԱԾԻԲՆԻ ՀԻՄՆԱԴՐՈՒԹԻՒՆ ԱՌՆՀԵՄԻ ՄԷՋ

15 Նոյեմբեր 2015-ին, Հ.Մ.Ը.Մ-ի համահայկական մեծ ընտանիքը օժտուեցաւ նոր մասնաճիւղով մը, երբ Հոլանտայի Առնհեմ քաղաքին մէջ հաստատուած խումբ մը հայորդիներու ղեմուძին ընդառաջելով, Հ.Մ.Ը.Մ. կազմակերպական իր ցանցին մէջ առաւ շրջանի նորաստեղծ մասնաճիւղը:



Առնհեմը Հոլանտայի արեւելքը գտնուող 150 հազար բնակչութեամբ քաղաք մըն է: Ան կելտրըլենտ նահանգին կեդրոնն է, տարածուած Նեստրոփին գետի զոյգ ափերուն:

Առնհեմի մասնաճիւղի հիմնադրութեան պաշտօնական հանդիսութեան ներկայ



գտնուեցան Հ.Մ.Ը.Մ-ի կեդրոնական վարչութեան ատենապետ եղբ. Գառնիկ Մկրտիչեան եւ կեդրոնական վարչութեան անդամ եղբ. Անդրանիկ Պահարեան:

Հանդիսութեան ընթացքին տեղի ունեցաւ Հ.Մ.Ը.Մ-ի հիմնադրութեան 97-ամեակի տօնակատարութիւն եւ միութեան դրօշի ու կանոնագիրի փոխանցում՝ մասնաճիւղի հիմնադիր վարչութեան:



Հ.Մ.Ը.Մ.Ի ԳԱՀԻՐԷԻ ՄԿԱՌԲՏՆԵՐՈՒՄՆ ՄԱՍՆԱԿՅՈՒԹԻՒՄՆԸ ՄՈՒՍԱ ԼԵՌԱՅԻՆԵՐՈՒ ՅԻՇԱՏԱԿԻՆ ՓՈՐ ՍԱՅԻՏԻ ՄԷՋ ԿԱՌՈՒՅՈՒՄԾ ԴԱՄԲԱՐԱՆ-ՅՈՒՇԱԿՈԹՈՂԻՆ ԲԱՅՄԱՆ

Թղթակից
ԳԱՅԻՐԷ

16

Հոկտեմբեր 2015-ը յիշատակելի օր մը եղաւ Գահիրէի Հ.Մ.Ը.Մ. «Արարատ»ի ըսկառուներուն համար, որոնք 28 հոգինոց պատուիրակութեամբ մը իրենց մասնակցութիւնը բերին Փոր Սայիտի մէջ Մուսա Լեռնիներու յիշատակին կառուցուած դամբարան-յուզակոթողի բացման հանդիսութեան:

Հանդիսութիւնը նուիրուած էր Մուսա Լեռան հերոսամարտէն փրկուած եւ 1915-1919 Փոր Սայիտ ապաստանած այն հայորդիներուն, որոնք չզիմանալով իրենց զաղթակայան-



վրանաքաղաքի դժուարին պայմաններուն, մահացած եւ թաղուած էին հոն:

Բացման հանդիսութեան նախորդեց հոգեհանգստեան արարողութիւն, ներկայութեամբ հոգեւոր հայրերու եւ այս առիթով Այնճարէն ժամանած բազմանդամ պատուիրակութեան մը, որուն մաս կը կազմէին Մուսա Լեռան հերոսամարտի 100-ամեակի մարմնի նախագահ Եսայի Հաւաթեան, 100-ամեակի մարմնի անդամներ, Այնճարի քաղաքապետ Կարօ Փամպուքեան եւ գիւղի ազգային պատկան մարմիններու ներկայացուցիչներ:



Դամբարան-յուզակոթողին շուրջ արտասանուեցան խօսքեր եւ առնուեցան յիշատակի նկարներ:

Դամբարան-յուզակոթողին շուրջ արտասանուեցան խօսքեր եւ առնուեցան յիշատակի նկարներ:



«ՓՈՔՐ ԱՍԻԱՆ - ԵՐԷԿ ԵՒ ԱՅՍՕՐ» ՁԵՌՆԱՐԿԸ

ՆՈՒՒՐՈՒԱԾ ՀԱՅՈՑ ՑԵՂԱՍՊԱՆՈՒԹԵԱՆ 100-ԱՄԵԱԿԻՆ



Թղթակից ԱԹԵՆՔ

Հ.Ա.Ը.Ա.ի Յունաստանի Շրջանային Վարչութիւնը Չորեքշաբթի, 2 Դեկտեմբեր 2015-ին, «Ձաւարեան» կեդրոնի «Սարաճեան-Չաքարեան» սրահներուն մէջ կազմակերպեց «Փոքր Ասիաներէկ եւ այսօր» նիւթով ձեռնարկը՝ նուիրուած Հայոց Ցեղասպանութեան 100-ամեակին:

Ձեռնարկին ներկայ գտնուեցան Ազգային Վարչութեան ներկայացուցիչը, Գոթինիոյ քաղաքապետը եւ երեսփոխանը, Հ.Յ.Դ. Յունաստանի կեդրոնական կոմիտէի ներկայացուցիչը, յունական սկաուտական խնամակալութեան ներկայացուցիչներ, պատմաբաններ, յունական եւ հայկական միութիւններու ներկայացուցիչներ, Հ.Կ. Խաչի Շրջանային Վարչութեան ներկայացուցիչներ եւ մեծ թիւով յոյներ:

Ձեռնարկին ընթացքին հետեւեցանք Փոքր Ասիոյ բնիկ ժողովուրդներու մշակոյթներու հետքերուն՝ նկարներու ցուցադրութեամբ եւ տիկին Գուլին Մինասեանի հանդարտ, տպաւորիչ եւ մանրամասն բացատրութիւններով: Այցելեցինք պատմական վայրեր, ինչպէս՝ Կիլիկիա, Տիգրանակերտ, Այնթապ, Ուրֆա, Մարտին, Ակն, Տերսիմ, Կեսարիա, Չմիւռնիա, Սիս, Ատանա, Հռոմկլայի բերդը եւ հետեւեցանք վերջին տարիներուն կազմակերպուած Ապրիլ 24-ի ձեռնարկներուն:

Ձգացումները շատ էին եւ տարբեր. ինչո՞ւ, ի՞նչպէս, վայրենի վարմունք, յարգանքի պակաս, կարօտ, հիացում, բայց բոլորը կապուած նոյն բողոքով՝ խոստում, պայքար, յոյս, հաւատք ու միասնութիւն մեզի կը պատկանին, եւ կրկին պիտի վերադառնան մեզի:

Հպարտացանք մեր հայրենակիցներուն կեանքով, որոնք զօրաւոր ոգիով կ'ապրին այդ դժուարին պայմաններուն մէջ:

with the complements of

Restaurant Al-Mayass



Հ.Մ.Ը.Մ.Ի ՎԻԵՆՆԱՅԻ ՄԱՄՆԱՃԻԴԻՆ ՄԿԱՌԻՏԱԿԱՆ ԽՈՍՏՄԱՆ ԱՐԱՐՈՂՈՒԹԻՒՆԸ

Թղթակից ՎԻԵՆՆԱ

Շաբաթ, 21 Սեպտեմբերին տեղի ունեցավ Հ.Մ.Ը.Մ.ի Վիեննայի մասնաճիւղին արի-արենոյնե-րու եւ գայլիկ-արծուիկներու խոստման արարողութիւնը:

Արարողութեան սկիզբը, մասնաճիւղի վարչութեան խօսքը փոխանցեց քոյր Արսի-նէ Կարապետեան: Ան նշեց Հ.Մ.Ը.Մ.ի դերը նորահաս սե-րունդներու հայեցի դաստիարակութեան գործին մէջ:

Եղբ. Գրիգոր Հալլաճեան ներկայացուց Հ.Մ.Ը.Մ.ի երեք հիմնադիրներուն՝ Շաւարշ Քրիսեանի, Գրիգոր Յակոբեանի



եւ Հինդլեանի կենսագրական գիծերը:

Ապա, սկառտները ներկայացուցին գեղարուեստական կոկիկ յայտագիր մը, որմէ ետք խանդավառ միջնորդութի մէջ-տեղի ունեցավ խոստման արարողութիւն:

Այս առիթով, վարչութիւնը շնորհաւորեց նոր խոստում տուող քոյրերն ու եղբայրները եւ մեծապէս գնահատեց քոյ-րեր Ալիք Շատոյեանը, Շաղիկ Շատոյեանը եւ եղբ. Յակոբ Սահակեանը՝ անոնց մաղթելով նորանոր յաջողութիւններ:

ՄԱՄՆԱՃԻԴԻ

ԿԵԴՐՈՆԻՆ ՎԵՐԱԲԱՑՈՒՄԸ

Օր մը առաջ, 20 Սեպտեմբեր 2015-ին, մեծ յաջողութեամբ տեղի ունեցավ Հ.Մ.Ը.Մ.ի Վիեննայի մասնաճիւղի կեդրոնին վերաբացումը, ներկայութեամբ Աւստրիոյ մօտ Հայաստանի Հանրապետութեան դեսպան Արման Կիրակոսեանին, դես-պանատան անդամներու, հոգեւոր հայրերու, Վիեննայի գա-ղութի ներկայացուցիչներու եւ Հ.Մ.Ը.Մ.ի անդամներու:





Հ.Մ.Ը.Մ.Ի ՄԻԱՒՈՐԻ ՀԻՄՆԱԳԻՐՈՒԹԻՒՆ ՀԻՒՍԻՍԱՅԻՆ ՔԱՐՈԼԱՅՆԱ ՆԱՀԱՆԳԻ ՇԱՐԼՈԹ ՔԱՂԱՔԻՆ ՄԷՉ

Հիւսիսային Քարոլայնա
ԹՂԹԱԿԻՑ

Կիրակի, 30 Օգոստոս 2015-ին, յաւարտ Սուրբ Պատարագի, Հիւսիսային Քարոլայնա նահանգի Սուրբ Սարգիս եկեղեցւոյ սրահին մէջ հիմը դրուեցաւ Հ.Մ.Ը.Մ.ի Շարլոթ քաղաքի միաւորին:

Միաւորին հիմնադրութիւնը կատարուեցաւ Հ.Մ.Ը.Մ.ի Արեւելեան Միացեալ Նահանգներու Շրջանային Վարչութեան կողմէ, ընդառաջելով տեղւոյն հայ համայնքի դիմումին: Այս առիթով կատարուեցաւ յատուկ հաւաք, որուն բացումը կատարեց եղբ. Բաֆֆի Շամուն: Ան բարի գալուստ մաղթեց բոլոր այն ծնողներուն, որոնք ընդառաջեցին Հ.Մ.Ը.Մ.ի կոչին եւ իրենց զաւակներով ներկայ եղան միաւորի հիմնադրութեան:

Ապա, յաջորդաբար խօսքեր արտասանեցին Հ.Մ.Ը.Մ.ի Արեւելեալ Միացեալ Նահանգներու Շրջանային Վարչութեան ատենապետ եղբ. Վահէ Թանաշեան, Շրջանային Վարչութեան անդամ եղբայրներ Արա Իշխանեան, Մարք Թորոսեան եւ Արամ Գայսերեան: Մանրամասն տեղեկութիւն փոխանցուեցաւ միաւորի ներկայ անդամներուն եւ ապագայ սկաուտներուն, Հ.Մ.Ը.Մ.ի պատմականին, կառույցին եւ գործունէութեան մասին:



Շրջանային Վարչութիւնը յայտարարեց նորակազմ միաւորին վարիչ մարմինը, յանձինս եղբ. Բաֆֆի Շամունի, քոյրեր Անոյշ Ճանեանցի եւ Թային Շամունի:

Շրջանային Վարչութիւնը յայտարարեց, որ Հ.Մ.Ը.Մ.ի որդեգրած ռազմավարական ծրագրի միաւորները հիմնելու առաջին արդիւնաւէտ քայլն էր այս մէկը, որուն համար Շրջանային Վարչութիւնը իր երախտագիտութիւնը յայտնեց ծնողներուն եւ նորանշանակ միաւորի անդամներուն:

Հիմնադիր հաւաքի աւարտին, Շրջանային Վարչութեան անդամները պատասխանեցին ներկայ ծնողներու եւ սկաուտներու հարցումներուն:





Հ.Մ.Ը.Մ.Ի ԱՐԵՒԵԼԵԱՆ Մ. ՆԱՀԱՆԳՆԵՐՈՒ 40-ՐԴ ՇՐՋԱՆԱՅԻՆ ՆԵՐԿԱՅԱՑՈՒՑՉԱԿԱՆ ԺՈՂՈՎԸ



յին վարչութեան ատենապետ եղբ. Վահէ Թանաշեան, Հ.Յ.Դ. Կեդրոնական Կոմիտէի ներկայացուցիչ Յովսէփ Աւագեան, Հ.Օ.Մ.ի Շրջանային վարչութեան ներկայացուցիչ Թալին Տաղլեան, Համագալինի Շրջանային վարչութեան ներկայացուցիչ Թալին Մալեան-Պարսումեան, Հ.Ե.Դ.ի Շրջանային վարչութեան ներկայացուցիչ Կարօ Թաշեան եւ Հ.Մ.Ը.Մ.ի Կեդրոնական վարչութեան լիազօր ներկայացուցիչ եղբ. Հրաչ Մեսրոպեան:

Խօսք առնողները բարձր գնահատեցին Հ.Մ.Ը.Մ.ի դերը հայ մատղաշ սերունդներու դաստիարակութեան մէջ եւ շեշտեցին համագործակցութեան կարեւորութիւնը, լաւապէս ծառայելու ազգային մեր վսեմ նպատակներուն:

Թղթակից ՆԻՒ ԵԼՐԶԻ

Հ.Մ.Ը.Մ.ի Արեւելեան Մ. Նահանգներու 40-րդ Շրջանային Ներկայացուցչական Ժողովը տեղի ունեցաւ 13-15 Նոյեմբեր 2015-ին, հիւրընկալութեամբ Նիւ Ճըրզիի մասնաճիւղին:

ՆԵՐԿԱՆԵՐԸ

Ժողովին մասնակցեցան շրջանի տասը մասնաճիւղերու՝ Ալպընիի, Նիւ Եորքի, Նիւ Ճըրզիի, Շիքակոյի, Տիթթոյի, Ուաշինկթընի, Պոսթընի, Փրովիտընսի, Տիլատելֆիոյ եւ Տլորիտայի, եւ առաջին անգամ ըլլալով, շրջանի նորակազմ Շարլոթ միաւորի լիազօր ներկայացուցիչները: Ժողովին ներկաներու շարքին էին Հ.Մ.Ը.Մ.ի Կեդրոնական վարչութեան լիազօր ներկայացուցիչ՝ եղբ. Հրաչ Մեսրոպեան եւ Արեւելեան Մ. Նահանգներու Շրջանային վարչութեան լիազօր ներկայացուցիչ եղբ. Վահէ Թանաշեան:

Խորհրդակցական ձայնով կը մասնակցէին Հ.Մ.Ը.Մ.ի Արեւելեան Մ. Նա-

հանգներու Շրջանային վարչութեան մնացեալ անդամները, Շրջանային մարզական յանձնախումբի եւ Սկաուտական Խորհուրդի ներկայացուցիչները եւ Շրջանային վարչութեան կողմէ խորհրդակցական ձայնով հրաւիրեալներ՝ եղբայրներ Լեւոն Պալեան, Օհան Օհանեան եւ Վարդգէս Վարդանեան: Ժողովին հիւրաբար մասնակցեցան Հ.Յ.Դ. Կեդրոնական Կոմիտէի, Հ.Օ.Մ.ի, Համագալինի եւ Հ.Ե.Դ.ի Շրջանային վարչութեան ներկայացուցիչները:

ԲԱՑՈՒՄԸ

Շրջանային ժողովին բացումը կատարուեցաւ Նիւ Ճըրզիի Սրբոց Վարդանանց եկեղեցւոյ սրահին մէջ, 13 Նոյեմբերի երեկոյեան ժամը 8-ին, «Յառաջ նահատակ» քայլերգով: Շրջանային վարչութեան լիազօր ներկայացուցիչ եղբ. Վահէ Թանաշեանի բարի գալուստի խօսքէն ետք, հրաւիրուեցաւ վարդանանց եկեղեցւոյ հոգեւոր հովիւ Յովնան Քհնյ. Պողոսեանը, որ աղօթքով օրհնեց ժողովը եւ այս առիթով փոխանցեց իր խօսքը: Յաջորդաբար խօսքեր արտասանեցին ընթացաւարտ Շրջանա-

ԱՌԱՋԻՆ ՕՐԸ

Առաջին օրը, ժողովը ընտրեց իր առժամեայ դիւանը եւ լիազօրագիրներու ստուգման յանձնախումբը: Ժողովի օրինականութիւնը հաստատելէ ետք, ընտրուեցաւ մնայուն դիւանը, որ բաղկացաւ ատենապետներ՝ եղբայրներ Յովիկ Աբգարեանէ եւ Շանթ Ժամկոչեանէ, ատենադպիրներ՝ քոյրեր Արշօ Գանթարճեանէ, Կարին Զէօփճեանէ եւ Հայկուշ Գարաքէլեանէ: Ապա, ժողովը ընտրեց բանաձեւի, արխիւային, պիւտճէի եւ քուէախոյզ յանձնախումբերը:

Ժողովի յաջորդ օրակարգն էր Հ.Մ.Ը.Մ.ի 11-րդ Պատգամաւորական Ընդհանուր ժողովի զեկոյցը: 39-րդ Շրջանային Ներկայացուցչական բացառիկ ժողովի կողմէն ընտրուած պատգամաւորներ Շանթ Ժամկոչեան, Արա Պարսումեան, Թորոս Ոսպիկեան, Ռագմիկ Փանոսեան, Վահէ Թանաշեան եւ Արամ Գայսէրեան մանրամասն եւ շահեկան տեղեկութիւններ փոխանցեցին ժողովի

բացման, օրակարգին, ընթացքին եւ տուած կարեւոր որոշումներուն մասին:

ԵՐԿՐՈՐԴ ՕՐԸ

Յաջորդ օրը, Շաբաթ, 14 Նոյեմբերին ժողովը շարունակեց իր աշխատանքները՝ լսելով տասը մասնաճիւղերու եւ Շարլոթ միաւորի միացեալ եւ ամփոփ զեկոյցները: Լուսաբանական հարցումներուն պատասխանեցին վարչութիւններու ներկայացուցիչները:

Օրակարգի յաջորդ կէտով ժողովը լսեց ընթացաւարտ Շրջանային Վարչութեան երկամեայ նիւթաբարոյական տեղեկագիրը: Լուսաբանական հարցումներուն յաջորդեցին ժողովականներու ըստ էութեան արտայայտութիւնները:

Համաձայն տեղեկագիրներու, անցնող երկամեակին շրջանը ունեցած է բեղուն գործունէութիւն:

Ներկայիս Հ.Մ.Ը.Մ.ի Արեւելեան Մ. նահանգներու շրջանը ունի-

- 1000-է աւելի անդամներ:
- Մօտ 400 սկաուտ եւ 500 մարզիկ:
- 75-է աւելի մարզական երկսեռ խումբեր՝ Ֆուլթոնի, պասքեթպոլի, վոլիպոլի, լողի եւ աթլէթի, ծիւ, փոքր, կրտսեր, երէց եւ վեթերան դասակարգերով:

Անցնող երկամեակին, շրջանը կազմակերպած է հետեւեալները-

- Մասնաճիւղերու վարչական կազմերու երկու խորհրդաժողովներ, Մարտ 2014-ին Նիւ Եորքի մէջ, եւ Մարտ 2015-ին, Նիւ Ճորջի մէջ:
- Նաւասարդեան 24-րդ խաղեր, Յուլիս 2014-ին, Նիւ Եորքի մէջ: Խաղերուն մասնակցած են 375 մարզիկներ-մարզիկուհիներ:
- Նաւասարդեան 25-րդ խաղեր, Յուլիս 2015-ին, Պոսթընի մէջ: Խաղերուն մասնակցած են 430 մարզիկներ-մարզիկուհիներ:
- Օգոստոս 2014-ին, շրջանէն 100 սկաուտներ մասնակցած են Համա-Հ.Մ.Ը.Մ.ական 10-րդ Ընդհանուր Բանակումին:
- Օգոստոս 2015-ին, Շրջանային սկաուտական 28-րդ բանակում, Ֆիլատելիոյ մէջ, մասնակցութեամբ 90 սկաուտներու:



- Յունիս 2015-ին, Պոսթընի մէջ տեղի ունեցած է Շրջանային Ներկայացուցչական բացառիկ 39-րդ ժողովը, ուր ընտրուած են պատգամաւորներ՝ մասնակցելու Հ.Մ.Ը.Մ.ի 11-րդ Ընդհանուր ժողովին:

- 7-12 Սեպտեմբեր 2015-ին, շրջանի պատգամաւորները մասնակցած են Հ.Մ.Ը.Մ.ի 11-րդ Պատգամաւորական Ընդհանուր ժողովին:

- Յատկանշական եղած է Հ.Մ.Ը.Մ.ի առաջին միաւորի ստեղծման երեւոյթը: Կիրակի, 30 Օգոստոս 2015-ին, Հ.Մ.Ը.Մ.ի Արեւելեան Մ. նահանգներու Շրջանային Վարչութիւնը, ընդառաջելով տեղւոյն համայնքի դիմումին, հիմը դրած է Հ.Մ.Ը.Մ.ի Շարլոթ քաղաքի միաւորին:

- Անցնող երկամեակին, արհեստագիտական միջոցները լաւապէս օգտագործուած են դիւրացնելու համար շրջանին աշխատանքները: Իբրեւ օրինակ կարելի է նշել «Google»-ը եւ Նաւասարդեան խաղերու մասնակցութեան դիմումնագիրներուն համացանցի միջոցով ներկայացումը:

ԾՐԱԳԻՐՆԵՐՈՒ ՄՇԱԿՈՒՄԸ

Այնուհետեւ, Ներկայացուցչական ժողովը իր աշխատանքները շարունակեց եւ մշակեց յառաջիկայ երկամեակի մարզական եւ սկաուտական գործունէութեան ծրագիրները: Այսպէս, որոշուեցաւ 2016-ի Նաւասարդեան խաղերը կատարել Շիքակոյի մէջ, իսկ 2017-ի խաղերը՝ Փրովիտընսի մէջ: 2016-ի Շրջանային բանակումը տեղի պիտի ունենայ Պոսթընի մէջ, իսկ 2017-ի բանակումը՝ Տիթրոյթի մէջ:

Ժողովը եզրակացուց շինիչ առա-

ջարկներ եւ թելադրանքներ, բարելաւելու համար շրջանին գործունէութիւնը եւ ընդառաջելու համար նոր սերունդի պահանջներուն:

Ժողովին ընթացքին վերամըշակուեցաւ շրջանի մարզական ներքին կանոնագիրը: Որդեգրուած կանոնագրային փոփոխութիւնները նպատակադրեցին բարելաւել շրջանիս Նաւասարդեան խաղերուն կազմակերպումը:

40-րդ Շրջանային Ներկայացուցչական ժողովին ուղարկութեան արժանի նիւթերէն էին համա-Հ.Մ.Ը.Մ.ական յաջորդ մարզախաղերը եւ բանակումը, որոնք տեղի պիտի ունենան Հայաստանի մէջ, 2017-ի եւ 2018-ի ամրան:

Քննարկման արժանացաւ նաեւ վերջին երկու Պատգամաւորական Ընդհանուր ժողովներուն մշակուած՝ Հ.Մ.Ը.Մ.ի ռազմավարական ծրագիրը եւ անոր գործադրութեան միջոցները շրջանին մէջ:

Նկատելի եւ ուրախ երեւոյթ էր ներկայացուցիչներու շարքին մեծ թիւով երիտասարդ եւ երկար տարիներու վաստակ ունեցած Հ.Մ.Ը.Մ.ականներու ներկայութիւնը: Հազիւ քսան տարիքը բոլորած անդամներու կողքին, կային 85 երկար տարիներ ծառայած Հ.Մ.Ը.Մ.ականներ: Այս երեւոյթը յաւելեալ յոյս կը ներշնչէ միութեան յարատեւման ու հզօրացման եւ լաւապէս կը դրսեւորէ միութեան նշանաբանը՝ «Բարձրացի՛ր-բարձրացուր»:

ՆՈՐԸՆՏԻՐ ՇՐՋԱՆԱՅԻՆ ՎԱՐՉՈՒԹԵԱՆ ԿԱԶՄԸ

40-րդ Շրջանային Ներկայացուցչական ժողովի աւարտին ընտրուեցաւ նոր Շրջանային Վարչութիւն մը, բաղկացած հետեւեալ անդամներէն.- եղբ. Վահէ Թանաշեան (Ուաշինկթըն), եղբ. Ռազմիկ Փանոսեան (Պոսթըն), եղբ. Մարք Թորոսեան (Նիւ Ճորջի), եղբ. Արա Իշխանեան (Ֆիլատելիա), քոյր Էլիզապէթ Դրամկոչեան (Ֆիլատելիա), եղբ. Վիգէն Խաչատուրեան (Պոսթըն) եւ եղբ. Յովսէփ Մինասեան (Նիւ Եորք):



«Հ.Մ.Ը.Մ.Ի ՕՐ» ՈՒԱՆ ՏՕՆԱԽՄԲՈՒԹԵԱՆ ԸՆԹԱՅՔԻՆ՝

Հ.Մ.Ը.Մ.Ի «ԾԱՌ-ԱՅՈՒԹԵԱՆ» ՇՔԱՆՇԱՆ 16 ՔՈՅՐ-ԵՂԲԱՅՐՆԵՐՈՒ

Մարտ Բեչիշեան
ԼՈՍ ԱՆՃԵԼԸՍ

Շաբաթ, 21 Նոյեմբեր 2015-ի երեկոյեան, Հ.Մ.Ը.Մ.Ի Կլէնտէյլի «Արարատ» մասնաճիւղին սրահը ժամադրավայրը դարձած էր Հ.Մ.Ը.Մ.՝ ակաճաններուն, որոնք սրահ փութացած էին մասնակից դառնալու «Հ.Մ.Ը.Մ.Ի Օր» ունան տօնախմբութեան եւ իրենց երախտագիտութիւնը յայտնելու այս կազմակերպութեան, որ ծնունդ առաւ, որպէսզի առողջ միջավայր մը ստեղծէ հայ երիտասարդութեան:

Ներկայ էին թեմի Առաջնորդ Մուշեղ

Արք. Մարտիրոսեան, Հ.Մ.Ը.Մ.Ի Կեդրոնական Վարչութեան անդամ եղբայրներ Վիգէն Դաւիթեան եւ Աւստրալիայէն հիւրաբար շրջանը գտնուող Վիգէն Քորթեան, Հ.Յ.Դ. Կեդրոնական Կոմիտէի անդամ՝ Հ.Մ.Ը.Մ.՝ ակաճան Կարօ Իսբէնճեան, Հ.Մ.Ը.Մ.Ի 40-րդ Նաւասարդեան մարզախաղերու պատուոյ նախագահ Վարանդ եւ Հուրի Մելքոնեաններ, Համագայինի Շրջանային Վարչութեան ներկայացուցիչներ, անցեալի պատուոյ նախագահներ, «Տիպար Հ.Մ.Ը.Մ.՝ ակաճան»ներ, մասնաճիւղերու վարչականներ, հիւրեր եւ բազմաթիւ անդամներ:

Ձեռնարկին բացումը կատարուեցաւ Մ. Նահանգներու, Հայաստանի եւ Հ.Մ.Ը.Մ.Ի քայլերգներու մենբերգումով, զոր



կատարեց Հ.Մ.Ը.Մ.Ի «Արարատ» մասնաճիւղի գործադիր խմբագրութեան հիւր իվանա Գրիգորեան: Ձեռնարկին կատարեցին Հ.Մ.Ը.Մ.Ի Լոս Անճելըսի մասնաճիւղի փոխ խմբագրութեան հիւր Նաթալիա Հինտոյեան (հայերէն) եւ «Արարատ» մասնաճիւղի միակորի խմբագրութեան եղբ. Շանթ Միրզայեանս (անգլերէն):

«Այսօր համախմբուած ենք տօնախմբելու «Հ.Մ.Ը.Մ.Ի Օր»ը եւ գնահատելու հազարաւոր այն անձնաւորութիւնները, որոնք մեր սիրելի կազմակերպութիւնը հասցուցին այս մակարդակին, եւ մենք, մեր միասնական աշխատանքով պիտի շարունակենք մեր հիմնադիրներուն սկսած գործը եւ պիտի որոշենք այս հզօր կազմակերպութեան փայլուն ապագան», ըսին անոնք:

Սեղաններու օրհնութիւնը կատարեց եւ հայրական իր օրհնութիւնները փոխանցեց Առաջնորդ Մուշեղ Արք. Մարտիրոսեան, որ ըսաւ. «Երբ այսօր համախմբուած ենք «Հ.Մ.Ը.Մ.Ի Օր» ունան տօնակատարութիւնը միասնաբար վայելելու, առաջին հերթին պէտք է խոնարհինք յիշատակին առջեւ բոլոր անոնց, որոնք ո՛չ միայն հիմնեցին Հ.Մ.Ը.Մ.ը, այլ անոր հիմնադրութեանն ենք, իբրեւ արժանաւոր կերտիչները Հ.Մ.Ը.Մ.Ի ուղղութեան եւ ծառայական կեանքին, կերտեցին Հ.Մ.Ը.Մ.Ի այդ օրերու ներկան, որպէսզի Հ.Մ.Ը.Մ.Ին այսօրուան լուսաւոր ներկայութիւնը վայելենք: Պատիւ հիմնադիրներուն, օրհնութիւն իրենց յիշատակին», ընդգծեց Առաջնորդը:

Ապա, օրուան խորհուրդը բացատրելով՝ ան ըսաւ. «Այսօր երախտագիտութեան օր է: Այս օրը մեր շնորհակալութիւնը յայտնելու եւ յարգանքով խոնարհելու պահ է Հ.Մ.Ը.Մ.Ի բոլոր կերտիչներուն եւ նուիրեալ ղեկավարներուն առաջ: Անոնցմէ պիտի մասնաւորեմ Շաւարշ Քրիսեանը. ճիշդ է, որ ան Յեղասպանութեան զոհ գնաց, սակայն ան հիմը դրաւ երիտասարդական այն կազմակերպութեան, որ հետագային կոչուեցաւ Հ.Մ.Ը.Մ.: Իր անունը առնուեցաւ Հ.Մ.Ը.Մ.Ի պատմութեան մէջ: Այսօր, երբ մեր նահատակները հաւաքաբար սրբադասուած են, ինք կը պատկանի հաւաքաբար սրբադասուած փառանքին: Հետեւաբար, մեր այս կազմակերպութեան եւ երիտասարդական կազմակերպութեան հիմնադիրները Աստուծոյ մօտ մեզի բարեխօս են:


«Այս օրը մեզի համար հպարտութեան օր է՝ ոչ միայն մեր անցեալի փառքին, այլ՝ Հ.Մ.Ը.Մ.Ի մեծ ընտանիքին մաս կազմած եւ մէկական տիպար Հ.Մ.Ը.Մ.՝ ակաճաններ ըլլալուն համար: Պատիւ բոլորիդ»:

Եզրակացնելով՝ Առաջնորդը շնորհաւորեց ձեռնարկին կազմակերպումը, որ նաեւ նուիրեալներ պարգեւատրելու օր է, որպէսզի անոնց ծառայական ուղին նոր սերունդներուն բարի օրինակ ծառայէ:

Հ.Մ.Ը.Մ.Ի Արեւմտեան Մ. Նահանգ-

ներու Շրջանային Վարչութեան պատգամը փոխանցեց ատենապետ եղբ. Մանուէլ Մարտիկեանը, որ հպարտալի երեւոյթ նկատելով Հ.Մ.Ը.Մ.Ի 97 տարիներու գոյատեւումը՝ գայն արդիւնքը նկատեց Հ.Մ.Ը.Մ.Ի առաքելութեան, որ ղեկարած նպատակներուն եւ անոնց ընդմէջէն դաստիարակուած սերունդներուն, որոնցմէ շատերը այսօր ղեկավարներ են ազգային մեր կառույցներուն մէջ:

«Վարչութեանս փափաքն է այս տօ-





նախաժողովները աւանդութեան վերածել: Ամէն տարի տօնուրի այս կարեւոր օրը, եւ մենք, մասնաճիւղերու վարչութիւններու թելադրանքով՝ պատուենք մեր անդամները, որոնք տարիներ շարունակ անսակարկ նուիրումով գործած են այս կազմակերպութեան համար, իսկ Շրջանային Վարչութիւնը ամէն տարի, Կեդրոնական Վարչութեան հաւանութեամբ, «Արտակարգ» պատուանշանով պատուէ մեր կազմակերպութեան նիւթապէս եւ բարոյապէս նեցուկ կանգնող համակիրները: Նաեւ՝ յարգուի մեզմէ յաւէտ բաժնուած Հ.Մ.Ը.Մ.ական քոյր-եղբայրներուն յիշատակը՝ մեր եկեղեցիներէն ներս հոգեհանգստեան արարողութեամբ», հաստատեց եղբ. Մարսէլեան:

Եղբ. Մարսէլեան Շրջանային Վարչութեան անունով շնորհակարարեց պարգեւատրեալները, շնորհակալութիւն յայտնեց երիտասարդ հանդիսավարներուն, կազմակերպիչ յանձնախումբին եւ ներկաներուն: Ապա եզրակացնելով իր պատգամը, ան շնորհակալութիւն յայտնեց Առաջնորդ հօր, որ հակառակ իր խճողուած ժամանակացոյցին, միշտ կ'ընդառնէ Հ.Մ.Ը.Մ.ի հրաւերներուն եւ իր հայրական խօսքերով կը քաջալերէ անոր հոգածութեան յանձնուած երիտասարդութիւնը:

Եղբայր Մարսէլեանի պատգամէն ետք, տեսերիզի միջոցով ցուցադրուեցաւ շրջանի Հ.Մ.Ը.Մ.ի բարերար Աշխէն



Փիլաւճեանին «Արտակարգ» պատուանշանի յանձնումի արարողութիւնը: Յայտնենք, թէ այս տարի այս պատուանշանին համար նկատի առնուած էր բարերարուհին, որ սակայն առողջական պատճառներով չկարողացաւ ներկայ գտնուիլ ձեռնարկին:

Այնուհետեւ ներկայացուեցան 2015 տարեշրջանին մեզմէ յաւէտ բաժնուած Հ.Մ.Ը.Մ.ականներուն նկարները՝ մեծ յուզմունք յառաջացնելով ներկաներուն մօտ:

Ընթրիքի դադարէն ետք ցուցադրուեցաւ Հ.Մ.Ը.Մ.ի պատմականը ներկայացնող տեսերիզ մը, որմէ ետք տեղի ունեցաւ երեկոյին զլխաւոր առանցքը

հանդիսացող Հ.Մ.Ը.Մ.ի «Ծառայութեան» շքանշաններու յանձնումը, որ նախապէս որոշուած էր մասնաճիւղերու վարչութիւններուն կողմէ: Շքանշանները եւ հաստատագիրները յանձնեցին Շրջանային Վարչութեան համապատասխան մասնաճիւղերու կապը հանդիսացող քոյր-եղբայրները: Նախ ներկայացուեցաւ պարգեւատրեալներուն միութեանական գործունէութիւնը: Այսպէս, շրջանի Հ.Մ.Ը.Մ.ի «Ծառայութեան» շքանշանը ստացան հետեւեալ քոյր-եղբայրները.-

- Քոյր Անի Հինտոյեան՝ Լոս Անձելըսի մասնաճիւղէն.
- Եղբ. Վահան Տէրունեան՝ Սան Ֆրանսիսքոյի մասնաճիւղէն.
- Եղբ. Արա Ճիէրեան՝ Յրեզնոյի «Սասուն» մասնաճիւղէն.
- Եղբ. Մանուկ Զէյթունեան՝ Մոնթեպելլոյի մասնաճիւղէն.
- Եղբ. Յակոբ Ղազարեան՝ Փասատինայի «Ազատամարտ» մասնաճիւղէն.
- Եղբ. Յուսիկ Ղուկասեան՝ Կլենտէյլի «Արարատ» մասնաճիւղէն.
- Եղբ. Վիգէն Աբէլեան՝ Օրէնճ Քաունթիի «Սարգարապատ» մասնաճիւղէն.
- Եղբ. Քրիս Աբգարեան՝ Սան Ֆեռնանտո Հովիտի «Մասիս» մասնաճիւղէն.
- Եղբ. Րաֆֆի Վարժապետեան՝ Սան Տիէկոյի «Սեւան» մասնաճիւղէն.
- Քոյր Շաքէ Գալայճեան՝ Ինլընտէմփայրրի «Արագ» մասնաճիւղէն.
- Եղբ. Պերճ Գասապեան՝ Քրեսենթա Հովիտի «Շանթ» մասնաճիւղէն.
- Եղբ. Նորիկ Աբուլեան՝ Պըրպէնքի «Սիփան» մասնաճիւղէն.
- Եղբ. Վաչէ Եագուպեան՝ Նորթ Հոլիվուտի «Ջաւախք» մասնաճիւղէն.



Հ.Մ.Ը.Մ.ի «Ծառայութեան» շքանշանին արժանացած էին նաեւ քոյր Ռինա Չանչանեան («Անի» մասնաճիւղէն), եղբ. Յարութիւն Պոյաճեան («Ֆինիքս» մասնաճիւղէն) եւ քոյր Լանա Քասսապ

(«Կարս» մասնաձեռնը), որոնք կամք է անկախ պատճառներով չէին կարողացած ներկայ գտնուիլ ձեռնարկին:

Արժանաւոր պարգեւատրեալները երկարաշունչ ծափողջոյններով գնահատուեցան ներկաներուն կողմէ:

Պաշտօնական յայտագիրի վերջին բաժինով ելոյթ ունեցաւ Հ.Մ.Լ.Մ.ի Կեդրոնական Վարչութեան անդամ եղբ. Վիգէն Դաւիթեան, որ շնորհաւորելով բոլոր պարգեւատրեալներն ու ձեռնարկի կազմակերպիչ Շրջանային Վարչութիւնը՝ իր գոհունակութիւնը յայտնեց, որ կը գտնուի վաստակաշատ Հ.Մ.Լ.Մ.ականներու մէջ եւ յատուկ հպարտանքով արտայայտուեցաւ անոնց աշխատանքներուն մասին: «Ուրախ եմ, որ Շրջանային Վարչութիւնը գնահատում է մեր անդամներին: Հ.Մ.Լ.Մ.ի աշխատանքը ո՛չ Շրջանային եւ ո՛չ էլ Կեդրոնական Վարչութեան մէջ է, այլ՝ մասնաձեռնի: Հ.Մ.Լ.Մ.ի ուժը իր մասնաձեռններն են: Աշխատանքը մասնաձեռնի մէջ է: Մեր յաղթական օրերը այն են, որ մեր անդամները իրար հետ խիստ կը մրցակցեն, ինչպէս տեսել ենք Նաւասարդեան մարզախաղերին,

բայց Նաւասարդեանից դուրս մտերիմ ընկերներ են իրար հետ: Սա մենակ խօսք չի, այլ՝ փորձառութեամբ եմ ասում», ըսաւ եղբ. Դաւիթեան: Ապա, ան շեշտեց Հ.Մ.Լ.Մ.ի հզօրացման կարեւորութիւնը, որ կարելի կընայ դառնալ՝ յաջողական սերունդներուն փոխանցելով Հ.Մ.Լ.Մ.ի ավանդները:

Հայոց Ցեղասպանութեան 100-ամեակի մարդաշատ ձեռնարկներուն եւ յատկապէս պահանջատիրական քայլարշաւին անդրադառնալով՝ եղբ. Դաւիթեան յիշեցուց, որ «Կանգնած ենք Հ.Մ.Լ.Մ.ի 100-ամեակի շեմին՝ 2018 թուին: Մեր կազմակերպութիւնը հզօր է, եւ մենք միասին, ձեռք-ձեռքի տուած՝ միասնաբար պիտի յաղթահարենք մեր դժուարութիւնները եւ առաւել վստահութեամբ պիտի շարունակենք մեր ավանդութիւնները: Մեր թշնամին պարտուած է՝ Հ.Մ.Լ.Մ.ի հզօրութեան հետեւանքով»:

Վիգէն Դաւիթեանի տպաւորիչ ելոյթէն ետք, Պայծառ Թովմասեան գեղեցիկ անակնկալով մը Քալիֆօրնիոյ նահանգային Ծերակոյտի նախագահ Քելլըն Տէ Լիոնի անունով գնահատագիր

մը յանձնեց Հ.Մ.Լ.Մ.ի Շրջանային Վարչութեան գրասենեակի վարիչ տնօրէն Ռուբինա Ճանսրգեանին, Հ.Մ.Լ.Մ.էն ներս ցուցաբերած իր ժրջան եւ նուիրեալ աշխատանքին համար: Այս նախաձեռնութիւնը մեծապէս գնահատուեցաւ ներկաներուն կողմէ:

Պաշտօնական յայտագիրի աւարտին, ներկաները քաղցր խօսքերով շնորհաւորեցին պարգեւատրեալները, իսկ ոմանք ալ հայկական շուրջպարերով ճոխացուցին մթնոլորտը:

Ձեռնարկը վերջ գտաւ ուշ երեկոյեան՝ անգամ մը եւս Հ.Մ.Լ.Մ.ի անխախտ գոյութիւնը պահպանելու կամքը դրոշմելով մասնակիցներուն մօտ:

ԼՈՅՍ ՏԵՍԱԻ

Հ.Մ.Լ.Մ.Ի ԸՆԴՀԱՆՈՒՐ ԾՐԱԳԻՐ - ԿԱՆՈՆԱԳԻՐ
(Պատգմ. 11-րդ ընդհանուր ժողովի բարեփոխումներով)

Հրատարակութիւն՝ Հ.Մ.Լ.Մ.ի Կեդրոնական Վարչութեան:



Elegance Plus

Shoes, Bags, Fashion Accessories & Gift Items

Bourj Hammoud - Dora - Armenia Street - Boyadjian Bldg.
Beirut - Lebanon
Tel. : 00961-1-248554, Fax : 00961-1-248556
Mob.: 00961-3-882811 - 00961-3-882812
E-mail: hratch@goldenmountains.com
hratchboy@hotmail.com

H. N. BOYADJIAN & CO.



Հ.Մ.Ը.Մ.Ի ՊԱՍՔԵԹՊՈԼԻ ՁՄԵՌՆԱՅԻՆ ԽԱՂԵՐԸ ԵՒ ՔԱՀԱՄ-Ի ՄԱՐԶԱԽԱՂԵՐԸ ԸՆԹԱՑԱՆ ՄԵԾ ՈԳԵԻՈՐՈՒԹԵԱՄԲ

Մարո Քէշիշեան
ԼՈՍ ԱՆՃԵԼԸՍ

Հ.Մ.Ը.Մ.ի Արեւմտեան Միացեալ Նահանգներու շրջանի մարզական կեանքը հարուստ է մրցաշարքերով, որոնք զանազան մարզաճիւղեր ընդգրկելով՝ մեծ հետաքրքրութիւն կը ստեղծեն մասնակից Հ.Մ.Ը.Մ.ական երիտասարդութեան, մասնաճիւղերուն եւ շրջանի մարզասէր հասարակութեան մօտ:

Այդ մրցաշարքերու կարեւոր մարզախաղերէն են Հ.Մ.Ը.Մ.ի պասքեթպոլի ձմեռնային խաղերը, որոնք ամէն տարի

Հոկտեմբերին կը կազմակերպուին Շրջանային մարզական խորհուրդին կողմէ: Այս տարի կարեւոր այս մրցաշարքին կը մասնակցեցաւ բարձր եւ փոքր դասակարգերու 140 երկսեռ խումբեր՝ հետեւեալ մասնաճիւղերէն.-

- Լոս Անճելըսի մասնաճիւղ՝ 7 խումբ.
- Ֆրեզնոյի «Մասուն» մասնաճիւղ՝ 4 խումբ.
- Փասատինայի «Ազատամարտ» մասնաճիւղ՝ 22 խումբ.
- Կլէնտէյլի «Արարատ» մասնաճիւղ՝ 53 խումբ.
- Օրէնճ Քաունթիի «Սարդարապատ» մասնաճիւղ՝ 2 խումբ.
- Սան Ֆրանցիսկո Հովիտի «Մասիս» մասնաճիւղ՝ 24 խումբ.
- Ինլընտ Էմփայրրի «Արագ» մասնաճիւղ՝ 3 խումբ.
- Քրեսենթա Հովիտի «Շանթ» մասնաճիւղ՝ 21 խումբ.
- Պըրպէնքի «Սիփան» մասնաճիւղ՝ 3 խումբ.
- Լաս Վեկասի «Արցախ» մասնաճիւղ՝ 1 խումբ.

Բարձր դասակարգի 73 խումբերու մասնակցութեամբ, հետաքրքրական այս մրցումները սկիզբ առին 3-4 Հոկտեմբեր 2015-ին եւ շարունակուեցան մինչեւ 8 Նոյեմբեր 2015, «Պըրմիսկհամ Չարթրը Հայ Սքուլ»ի մարզադաշտերուն վրայ, մեծ թիւով Հ.Մ.Ը.Մ.ականներու եւ մարզասէրներու քաջալերական ներկայութեամբ:

Հոկտեմբերի առաջին շաբաթավերջին, Կլէնտէյլի «Արարատ» մասնաճիւղի մարզադաշտերուն վրայ սկիզբ առին նաեւ այս մրցաշարքի փոքր դասակարգի խումբերու մրցումները, որոնց կազմակերպումը վստահուեցաւ նոյն մասնաճիւղի մարզական բաժանմունքին: 13-րդ տարին ըլլալով կազմակերպուող այս մրցաշարքին մասնակցեցան 8, 10, 12 եւ 14 տա-

ԵՐԻՏԱՍԱՐԴԱԿԱՆ ԵՐԵԿՈՅ՝ «Հ.Մ.Ը.Մ.Ի ՕՐ»ՈՒԱՆ ԱՌԻԹՈՎ

Մարո Քէշիշեան
ԼՈՍ ԱՆՃԵԼԸՍ

«Հ.Մ.Ը.Մ.ի Օր»ուան ձեռնարկներու շարքին, Արեւմտեան Մ. Նահանգներու Շրջանային Վարչութիւնը գեղեցիկ գաղափարը ունեցաւ ընկերային երեկոյով մը համախմբելու շրջանի Հ.Մ.Ը.Մ.ական երիտասարդութիւնը: Ձեռնարկը տեղի ունեցաւ Ուրբաթ, 20 Նոյեմբերի երեկոյեան եւ առիթ մը հանդիսացաւ մարզադաշտերէն դուրս երիտասարդութեան հետ ընկերային հաճելի երեկոյ մը անցընելու:

«Հ.Մ.Ը.Մ.ի Օր»ուան նշումը չափազանց կարեւոր է մեզի համար: Անիկա առիթ մը կը հանդիսանայ մեր անդամներուն՝ յիշելու իրենց պատկանած միութեան առաքելութիւնը, հետապնդած նպատակները եւ, ինչո՞ւ է նաեւ, հիմնադիրներու կեանքը: Վարչութեանս փափաքն է, որ այս նախաձեռնութիւնը ամէն տարի կազմակերպուի եւ մեր նուիրեալ անդամները պարբերաբար պարգեւատրուին իրենց տքնաջան աշխատանքին համար, որպէսզի անոնց տիպարը բարի օրինակ դառնայ Հ.Մ.Ը.Մ.ի շարքերէն ներս», յայտնեց Հ.Մ.Ը.Մ.ի Շրջանային Վարչութեան ատենապետ Մանուէլ Մարսէլեան այս առիթով:



րեկան մարզիկներու 67 երկսեռ խումբեր: Առաւելաբար ծնողներէ քաջալերուած այս մրցումները մեծ հետաքրքրութիւն ստեղծեցին պասքեթպոլի փոքր դասակարգի խումբերուն մօտ, որոնցմէ իւրաքանչիւրը փորձեց ցուցաբերել իր լաւագոյն խաղարկութիւնը:

ՔԱՀԱՄ-Ի ՄԱՐԶԱՆԱՂԵՐԸ

Այս միջոցին, սկսած են արդէն Քալիֆորնիոյ Հայ Աշակերտական 32-րդ Մարզախաղերու (ՔԱՀԱՄ) նախապատրաստական աշխատանքները, որոնց ժամանակացոյցը հրապարակուած է: Մարզական լայնածաւալ այս նախաձեռնութիւնը նպատակ ունի Հ.Մ.Ը.Մ-ը ծանօթացնել շրջանի հայկական վարժարաններու աշակերտութեան:

Հ.Մ.Ը.Մ-ի Շրջանային Վարչութիւնը կը քաջալերէ շրջանի Հ.Մ.Ը.Մ-ի մասնաճիւղերը, որպէսզի անոնք ոչ-հայկական վարժարաններ յաճախող հայ աշակերտական խումբերով մասնակցին այս մրցումներուն, ինչ որ առիթ մը պիտի ըլլայ, որ անոնք մօտէն ծանօթանան Հ.Մ.Ը.Մ-ին եւ ինչու չէ նաեւ՝




մաս կազմեն անոր շարքերուն:


ՔԱՀԱՄ-ի մրցումները սկիզբ առին Կիրակի, 11 Հոկտեմբեր 2015-ին, «Պըրմիէնկհամ Հայ Սքուլ»-ի մարզադաշտերուն վրայ,



Թեթեւ ատլէթի մրցումներով: Անոնք ընդգրկեցին նաեւ պասքեթպոլի, ֆութպոլի, վոլիպոլի, թեթեւ ատլէթի, ճատրակի եւ փինկ-փոնկի մարզաճիւղերը: Մրցումներուն ժամանակացոյցը օրը-օրին կը հրապարակուի Հ.Մ.Ը.Մ-ի շրջանի համացանցի կայքէջով եւ ընկերային հաղորդակցութեան միջոցներով: ՔԱՀԱՄ-ի փակման եւ նաւասարդեան 41-րդ մարզախաղերու բացման հանդիսութիւնները տեղի կ'ունենան նոյն ժամանակ, Կիրակի, 13 Մարտ 2016-ին:



- Full of Charme Hotel, New Construction, French Architecture, International Standards, 100 m from the Republic Square and 15 minutes from the Yerevan International Airport.
- 44 Rooms and 3 Suites with all comforts, all climate controlled, minibar, shower or bathroom with private WC, hairdryer. Satellite TV, international direct dial phone. Internet & Email access.
- Individualized and personal service, 24 hour reception and room service
- Bar



Feel at home, away from home...

Yerevan
32-38, Hanrabedoutian Street,
Yerevan 375010, Armenia
Tel 374 10 54 60 60 • Fax 374 10 54 60 50
sales@europehotel.am

www.europehotel.am



ԴԱՍՏԻԱՐԱԿԶԱԿԱՆ ԾՐԱԳԻՐՆԵՐՈՎ ՀԱՐՈՒՄՏ Հ.Մ.Ը.Մ.Ի ՍԿԱՌԻՏԱԿԱՆ ԿԵԱՆՔԸ

Մարո Քեչիշեան
ԼՈՍ ԱՆՃԵԼԸՍ

Հ.Մ.Ը.Մ.ի Արեւմտեան Միացեալ Նահանգներու մասնաճիւղերու սկաուտական բաժանումներուն համար շատ հետաքրքրական եղան ամառնային տարեկան բանակումները, որոնք յատկանշուեցան իրենց միջ-մասնաճիւղային բնոյթով: Կարգ մը մասնաճիւղեր, ընկերային իրենց կեանքը աւելի զարգացնելու նպատակով, միասնաբար կազմակերպեցին իրենց բանակումները, ուր տարեկան իրենց տեսական աշխատանքները գործնականացնելով՝ մեծ հետաքրքրութիւն ստեղծեցին բանակողներուն մօտ: Ուրախալի էր, որ մեծ թիւով մասնաճիւղեր իրենց տարեկան բանակումները կազմակերպեցին Հ.Մ.Ը.Մ.ի «Թեքոյա» բանակավայրին մէջ:

Հ.Մ.Ը.Մ.ի Շրջանային Սկաուտ. Խորհուրդը, մասնաճիւղերու մօտ Հ.Մ.Ը.Մ.ի «Թեքոյա» բանակավայրին օգտագործման կարեւորութիւնը շեշտելու համար, կազմակերպեց բանակավայրի բարելաւման ի նպաստ երկօրեայ մաքրութեան արշաւ մը, որ տեղի ունեցաւ 10-11 Հոկտեմբեր 2015-ին եւ որուն հրահրուեցան շրջանի սկաուտական բոլոր բաժանումները: Այս առիթով կազմակերպուեցաւ նաեւ խրախուսանք մը:

«Այս աշխատանքը նպատակ ունի մեր արի-արեւոյններուն սորվեցնել՝ բժախնդիր ըլլալ իրենց երկրորդ տունը նկատուող Հ.Մ.Ը.Մ.ի «Թեքոյա» բանակավայրին նկատմամբ եւ մասնակից դառնալ անոր բարելաւման աշխատանքներուն, այնպէս ինչպէս կը վարուին իրենց անձնական տան հետ», այս առիթով բացատրեց Հ.Մ.Ը.Մ.ի Շրջանային Վարչութեան սկաուտականի կապ եղբ. Արտաշէս Ղազարեան:

Մասնաճիւղերու գուարճալի աշխատանքներուն յաջորդեցին Շրջանային Սկաուտ. Խորհուրդին կազմակերպած մնացեալ աշխատանքները, որոնցմէ առաջինն էին Հ.Մ.Ը.Մ.ի «Մեսրոպ Մաշտոց» կրօնական շքանշանի դասընթացները, որոնք կը դեկավարուին Արեւմտեան թեմի Ազգային Առաջնորդարանին կողմէ, գործակցութեամբ՝ Հ.Մ.Ը.Մ.ի Շրջանային Սկաուտ. Խորհուրդին:

Ամերիկեան սկաուտութեան կողմէ ճանաչում ստացած կրօնական շքանշանի այս ծրագիրը նպատակ ունի Հ.Մ.Ը.Մ.ի եւ տեղական սկաուտութեան ծանօթացնել Հայաստանեայց



Առաքելական եկեղեցոյ պատմութիւնն ու աւանդութիւնները, յատկապէս՝ հայկական տաղաւարները:

Կարեւոր այս նախաձեռնութեան արձանագրութիւնները տեղի ունեցան Շաբաթ, 3 Հոկտեմբեր 2015-ի առաւօտեան, Հ.Մ.Ը.Մ.ի Շրջանային Վարչութեան կեդրոնը: Ուրախութեամբ պէտք է ընդգծել, որ շրջանի «Սասուն» (Ֆրեզնօ), «Արարատ» (Կլենտէյլ), «Սիփան» (Պրրպենք), «Ազատամարտ» (Փասատինա) եւ «Արագ» (Ինլընտ էմփայրը) մասնաճիւղերէն 32 արի-արեւոյններ արձանագրուելով՝ պատրաստակամութիւն յայտնեցին հետեւելու շքանշանին տեսական եւ գործնական դասընթացներուն, որուն բացման հանդիսաւոր արարողութիւնը տեղի ունեցաւ Կիրակի, 4 Հոկտեմբեր 2015-ի առաւօտեան, Փասատինայի Ս. Սարգիս եկեղեցոյ մէջ, ուր մասնակիցները ներկայ գտնուեցան Ս. Պատարագին, ապա Ս. հաղորդութիւն ստացան եւ ստանձնեցին կրօնական շքանշանի դասընթացներուն իրենց մասնակցութիւնը յատկանշող փոքր խաչեր, որոնք օրհնուեցան թեմի Առաջնորդ Մուշեղ Արք. Մարտիրոսեանին կողմէ:

Դասընթացներուն ժամանակ մասնակիցներուն ներկայացուեցան «Հայ եկեղեցին եւ հաւատքը», «Հայկական մշակոյթ», «Հայոց պատմութիւն» եւ այլ անհրաժեշտ նիւթեր: Անոնք, իբրեւ գործնական աշխատանք, մատուցեցին նաեւ եկեղեցական կարգ մը ծառայութիւններ: Շքանշանի բաշխման հանդիսութիւնը տեղի ունեցաւ Կիրակի, 31 Յունուար 2016-ին:

Կրօնական շքանշանին առընթեր, Շրջանային Սկաուտ.

Խորհուրդը կազմակերպեց Վկայեալ կարգի դասընթացքներ, որոնք կը նպատակադրեն զարգացնել սկաուտ ղեկավարներու ղեկավարման կարողութիւններն ու հմտութիւնները: Տեսական եւ գործնական այս կարգի դասընթացքներուն կը մասնակցին 14 տարեկանէն վեր այն արի-արենոյշները, որոնք նուազագոյնը վեց ամիսէ ի վեր ստացած են սկաուտական իրենց Ա. կարգը:

Այս ծրագիրի մասնակիցներուն ծանօթացման ժողովը տեղի ունեցաւ Շաբաթ, 21 Նոյեմբերին: Դասընթացքները պիտի երկարեցան 8-10 Յունուար 2016, քննութիւնները կատար-

ւեցան Կիրակի, 17 Յունուար 2016-ին, իսկ համապատասխան արշաւ-բանակումը տեղի պիտի ունենայ 26-28 Փետրուար 2016-ին: Կարելոր այս կարգի վկայականներու եւ շքանշաններու յանձնման հանդիսութիւնը կը նախատեսուի կայացնել 15 Մայիս 2016-ին:

Կարելոր այս ծրագիրներէն անկախ, Շրջանային Սկաուտ-Խորհուրդի տարեկան ծրագիրին մաս կը կազմէ նաեւ «Ազգային շքանշանը», որուն դասընթացքները եւս պիտի սկսին շուտով:

Հ.Մ.Ը.Մ.Ի «ՄԱՍՈՒՆ» ՄԱՄՆԱԾԻՂԻՆ ԽՄԲԱՊԵՏԱԿԱՆ ԲԱՆԱԿՈՒՄԸ

Սարգիս Փանոսեան ՖՐԵՉՆՈ

Հ.Մ.Ը.Մ.Ի Ֆրեզնոյի «Մասուն» մասնաճիւղի խմբապետական կազմին կազմակերպութեամբ, 16-18 Հոկտեմբեր 2015-ին, Միլրթըն լիճի ափին տեղի ունեցաւ եռօրեայ բանակում մը, ներկայութեամբ մասնաճիւղին խմբապետական կազմին եւ մասնակցութեամբ աւելի քան 30 քոյրերու եւ եղբայրներու:

Առաջին օրը, սկաուտ քոյրերն ու եղբայրները միասնաբար հասան բանակավայր եւ սկսան բանակավայրի պատրաստութեան աշխատանքներուն: Անոնք բաժնուեցան 10 վրաններու մէջ, ապա տեղի ունեցաւ բանակավայրի մաքրութիւն եւ պաշտօններու բաշխում:

Խումբին կ'ընկերանային ծնողներ, որոնք սիրայօժար ստանձնած էին ճաշերու պատրաստութիւնը, ինչպէս նաեւ՝ երիտասարդ տղաք, որոնց պարտականութիւնն էր բանակավայրին հսկողութիւնը:

Երեկոյեան, ընթրիքէն ետք, երբ բանակավայրին մթնոլորտը ուրախ կանչերով եւ երգերով կը թնդար, յանկարծ սկսաւ տեղատարափ անձրեւը: Բոլորը խմբուեցան վրաններու տակ ու կանչերով եւ երգերով դիմաւորեցին զայն:

«Անձրեւ, անձրեւ ցած արի,
Բուցուր ցորեն ու գարի,
Բուցուր ծաղիկ, կանաչ խոտ,
Ալլէ փոշի, մաքրէ օդ»:

Տեղատարափէն ետք, բանակավայրը հանդարտեցաւ: Միայն պահակ քոյրերն ու եղբայրները կարգով կը կատարէին պահակութիւնը: Երեք օրերու ընթացքին, քոյրերն ու եղբայրները ուրախ տրամադրութեամբ արշաւներ եւ ձեռային աշխատանքներ կատարեցին: Անոնք նաեւ նաւակ մը պատրաստեցին եւ այդ նաւակով լիճին վրայ շրջելով՝ վայելեցին բնութեան եւ լիճին գեղեցկութիւնը:

Բանակումին երկրորդ օրը արշաւներ եւ ձեռային աշխատանքներ կատարելէ ետք, երեկոյեան տեղի ունեցաւ խարուկահանդէս՝ երգերով, կանչերով եւ հաճելի անակնկալներով:



Վերջին օրը ծնողներու այցելութեան օրն էր: Եղբայրներն ու քոյրերը զանազան խաղերով, կանչերով եւ երգերով խանդավառեցին ծնողները, որոնք ծափերով իրենց ուրախութիւնն ու երախտագիտութիւնը յայտնեցին: Երեկոյեան, ծնողները իրենց զաւակներով բաժնուեցան բանակավայրէն:

ՄԱՀԱՉԴ

Հ.Մ.Ը.Մ.Ի Կեդրոնական Վարչութիւնը կը գուժէ Հ.Մ.Ը.Մ.Ի Կեդրոնական Վարչութեան նախկին անդամ՝

ԵՂԲ. ԱՐՄԷՆ ՏԷՅԻՐՄԷՆՃԵԱՆԻ

մահը, որ պատահեցաւ Չորեքշաբթի, 25 Նոյեմբեր 2015-ին, Ֆրեզնոյի մէջ:



ՀՈԳԵ ՀԱՆԳՍՏԵԱՆ ՊԱՇՏՕՆ՝ ՆՆՋԵՑԵԱԼ Հ.Մ.Ը.Մ.ԱԿԱՆՆԵՐՈՒ ՀՈԳԻՆԵՐՈՒ ԽԱՂԱՂՈՒԹԵԱՆ ՀԱՄԱՐ Մ. ՆԱՀԱՆԳՆԵՐՈՒ...

Մարո Քէշիշեան
ԼՈՍ ԱՆՃԵԼԸՍ



ատմական գեղեցիկ գուգադիպուծեամբ մը, Հ.Մ.Ը.Մ.ը ծնունդ առաւ Հայաստանի առաջին Հանրապետութեան ստեղծման տարին՝ 1918-ին, Պոլսոյ մէջ: 1920-ին, ան գործեց նաեւ մեր անկախ հայրենիքին մէջ: Սակայն հազիւ չորս տարեկան, քաղաքական հասկնալի պատճառներով պարտադրաբար լուծուեցաւ Պոլսոյ մէջ, իսկ Հայաստանի խորհրդայնացումով՝ անոր գործունէութիւնը վերջ գտաւ նաեւ հայրենիքի մէջ:

Հակառակ այս բոլոր իրադարձութիւններուն, Հ.Մ.Ը.Մ.ը քալեց իր ժողովուրդի ճակատագիրին հետ եւ ծաղկեցաւ հո՛ն, ուր հայկական գաղութներ ստեղծուեցան եւ երիտասարդութիւն աճեցաւ: Հայաստանի երկրորդ անկախացման տարիներուն, Հ.Մ.Ը.Մ.ը վերսկսաւ հայրենի իր գործունէութեան եւ այսօր, աւելի քան 25 տարիներէ ի վեր, կը գործէ անկախ հայրենիքի մէջ, Հայաստանի Ազգային Սկստական Կազմակերպութիւն՝ Հ.Մ.Ը.Մ.-Հ.Ա.Ս.Կ. անունով: Հպարտութեամբ պէտք է ընդգծել, թէ Հ.Մ.Ը.Մ.-Հ.Ա.Ս.Կ.ը արժանացած է միջազգային ճանաչման:

Պատմական բացառիկ այս նուաճումը նշելու եւ այս մեծ կազմակերպութեան իր երախտագիտութիւնը յայտնելու նպատակով, Հ.Մ.Ը.Մ.ի Արեւմտեան Մ. Նահանգներու Շրջանային Վարչութիւնը կազմակերպեց շարք մը ձեռնարկներ, որոնց կարգին՝ Հ.Մ.Ը.Մ.ի հիմնադիրներուն եւ անոնց ջահը սերունդէ սերունդ փոխանցող ննջեցեալ Հ.Մ.Ը.Մ.ականներու յիշատակին հոգեհանգստեան պաշտօն:

Արեւմտեան Մ. Նահանգներու Թեմի Առաջնորդ Մուշեղ Արք. Մարտիրոսեանի արտօնութեամբ եւ Հ.Մ.Ը.Մ.ի Շրջանային Վարչութեան խնդրանքով, հոգեհանգստեան պաշտօնը տեղի ունեցաւ Կիրակի, 22 Նոյեմբերին, շրջանի Հայաստանեայց առաքելական բոլոր եկեղեցիներուն մէջ, յաւարտ Ս. Պատարագի: Հ.Մ.Ը.Մ.ի մասնաճիւղերու վարչութիւնները, սկստական եւ մարզական բաժանմունքներու ներկայացուցիչները ներկայ գտնուեցան իրենց շրջաններու եկեղեցիներուն մէջ կրօնական այս յատուկ արարողութեան եւ իրենց յարգանքի տուրքը մատուցեցին մեզմէ առ յաւիտ բաժնուած Հ.Մ.Ը.Մ.ականներուն:



Այդ օր, Մուշեղ Արք. Մարտիրոսեան պատարագեց Օրէնճ Քառնթիի Սրբոց Քառասնից Մանկանց եկեղեցոյ մէջ եւ անձնապէս կատարեց ու գլխաւորեց հոգեհանգստեան պաշտօնը: Շրջանային Վարչութեան ատենապետ եղբ. Մանուէլ Մարսէլեան եւ անդամ քոյր Մարո Քէշիշեան ներկայ գտնուեցան կրօնական այս արարողութեան՝ ընկերակցութեամբ Հ.Մ.Ը.Մ.ի հիմնադիրներէն նահատակ Շաւարշ Քրիստեանի եղբոր թոռան՝ տղթ. Շաւարշ եւ Մարի Քրիստեաններուն, նաեւ՝ Հ.Մ.Ը.Մ.ի Օրէնճ Քառնթիի «Սարդարապատ» մասնաճիւղի ատենապետ եղբ. Նազօ Տիշոյեանի, վարչութեան անդամներու եւ վաստակաշատ Հ.Մ.Ը.Մ.ական քոյր-եղբայրներու:

Առաջնորդը իր քարոզին մէջ յարգանքով յիշատակեց նուիրեալ ննջեցեալ Հ.Մ.Ը.Մ.ականները, որոնք հաւատքով ծառայած են իրենց սիրելի կազմակերպութեան եւ գուրգուրանքով մօտեցած են անոր հոգածութեան յանձնուած սերունդներու հոգեկան եւ ֆիզիքական առողջ դաստիարակութեան: Ան բարձր գնահատեց նաեւ Հ.Մ.Ը.Մ.ի ներկայ ղեկավարութիւնը, որ կը շարունակէ վառ պահել Հ.Մ.Ը.Մ.ի ջահը: Առաջնորդը այս առիթով յատուկ անդրադարձ կատարեց Շաւարշ Քրիստեանի կեանքին, վաստակին ու ձգած ժառանգին:

Այնուհետեւ, ներկայ Հ.Մ.Ը.Մ.ականներն ու Քրիստեան զոյգը մասնակցեցան «Ղուկասեան» սրահին մէջ կատարուած օրհնութեան եւ ճաշի հիւրասիրութեան:





... ԵՒ ԼԻՐԱՆԱՆԻ ՄԷՋ

Թղթակից
ՊԵՅՐՈՒԹ

Ննջեցեալ Հ.Մ.Ը.Մ.ականներու յիշատակին հոգեհանգստեան պաշտօն կատարուեցաւ նաեւ Լիբանանի մէջ, նախաձեռնութեամբ Հ.Մ.Ը.Մ.ի Լիբանանի Շրջանային Վարչութեան:

Կիրակի, 1 Նոյեմբերին, Նորաշէնի Սրբոց Վարդանանց եկեղեցւոյ մէջ, յաւարտ Ս. Պատարագի կատարուած հոգեհանգստեան արարողութեամբ, Հ.Մ.Ը.Մ.ի Լիբանանի ընտանիքը յարգանքի իր տուրքը մատուցեց նահատակ եւ ննջեցեալ այն բոլոր Հ.Մ.Ը.Մ.ականներուն, որոնք իրենց բովանդակ կեանքին ընթացքին անմնացորդ կերպով ծառայեցին համահայկական այս մեծ միութեան:

Հոգեհանգստեան պաշտօնին ներկայ էին Հ.Մ.Ը.Մ.ի Կեդրոնական Վարչութեան, Լիբանանի Շրջանային Վարչու-

թեան, մասնաճիւղերու վարչութիւններու եւ յանձնախումբերու ներկայացուցիչները, Շրջանային Սկստակական Խորհուրդն ու Շրջանային Խմբապետական կազմը, նախկին Շրջանային Վարչութիւններու անդամներ եւ ստուար թիւով Հ.Մ.Ը.Մ.ականներ:

Հոգեհանգստեան արարողութենէն ետք, Հ.Մ.Ը.Մ.ի Կեդրոնական Վարչութեան անդամներն ու Լիբանանի Շրջանային Վարչութիւնը ընդունեցին ցաւակցութիւններ: Մատուցուեցաւ հոգեսուրճ եւ կատարուեցաւ մտերմիկ զրոյց՝ լիբանանահայ գաղութը եւ Հ.Մ.Ը.Մ.ը յուզող հարցերուն:

Զրոյցին ընթացքին, Առաջնորդը անդրադարձաւ Հ.Մ.Ը.Մ.ի առաքելութեան եւ աշխարհասփիւռ աշխատանքներուն՝ յատկապէս կեդրոնանալով հայապահպանման գործին մէջ միութեան ունեցած մեծ ներդրումին եւ մարդուժի պատրաստութեան մէջ իր ունենալիք դերակատարութեան վրայ:



www.PhotoRaffi.me

6-8 Նոյեմբեր 2015-ին, «Աղբալեան-Հ.Մ.Ը.Մ.» մարզամշակութային համայնքին մէջ տեղի ունեցաւ Հ.Մ.Ը.Մ.ի Լիբանանի շրջանի ներկայացուցչական 45-րդ ժողովը, ներկայութեամբ Հ.Մ.Ը.Մ.ի Կեդրոնական Վարչութեան ներկայացուցիչին. Հ.Մ.Ը.Մ.ի Շրջանային Վարչութեան եւ Լիբանանի մէջ գործող 10 մասնաճիւղերու ներկայացուցիչներուն:

Ժողովը հանգամանօրէն քննեց ընթացաւարտ Շրջանային Վարչութեան նիւթաբարոյական տեղեկագիրը, կատարեց ըստ էութեան քննարկում եւ առաջարկներ ներկայացուց յառաջիկայ երկամեակի գործունէութեան համար:

Ժողովի աւարտին ընկրուեցաւ Շրջանային Վարչութեան նոր կազմ, որ իր առաջին հանդիպումին կատարեց աշխատանքներու հետեւեալ բաշխումը-
Եղբ. Հրայր Խաչատրեան- արեւնապետ
Քոյր Փաթիլ Եսայեան- բարբոտար
Եղբ. Միսաք Գալաթեան- գանչապահ
Եղբայրներ Յակոբ Էքմէքճեան, Քրիստի Լիպարեան, Յակոբ Թերզեան, Վարուժ Պապիկեան, Վահրամ Պարսումեան, Սեւակ Աբրահամեան, Յակոբ Մելէքեան եւ Աշոտ Թալաթեան - խորհրդակիսներ



Հ.Մ.Ը.Մ.Ի ՊՈՒՐՃ ՀԱՄՈՒՏԻ ՄԱՄՆԱՃԻՒՂԻ 80-ԱՄԵԱԿԻ ԵԶՐԱՓԱԿԻՉ ՀԱՆԴԻՍՈՒԹԻՒՆ

Թղթակից
ՊՈՒՐՃ ՀԱՄՈՒՏ

Նախագահութեամբ Լիբանանի Հայոց Թեմի Առաջնորդ Շահէ Եպսֆանոսեանի, հովանաւորութեամբ Հ.Մ.Ը.Մ.ի Լիբանանի Շրջանային Վարչութեան եւ կազմակերպութեամբ Հ.Մ.Ը.Մ.ի ՊՈՒՐՃ Համուտի մասնաճիւղի վարչութեան, Կիրակի, 22 Նոյեմբերի երեկոյեան ժամը 7-ին, «Յակոբ Տէր Մելքոնեան» թատերասրահին մէջ տեղի ունեցաւ Հ.Մ.Ը.Մ.ի ՊՈՒՐՃ Համուտի մասնաճիւղի 80-ամեակի եզրափակիչ հանդիսութիւնը:

Հ.Մ.Ը.Մ.ի շեփորախումբին կողմէ Լիբանանի եւ Հայաստանի քայլերգներուն կատարումէն ետք, հանդիսութեան բացման խօսքը արտասանեց մասնաճիւղի վարչութեան ատենապետ եղբ. Ժագ Ղազարեան: Եղբայրը նշեց, որ անցնող տասնամեակներուն Հ.Մ.Ը.Մ. դարձաւ հայութեան հաւատք եւ յոյս ներշնչող աղբիւր, հայկականութեան ամուր խարիսխ ու պատնէշ: Միութիւնը քալեց անսասան՝ միշտ ձգտելով յաղթանակի նուաճման: Եղբ. Ղազարեան խօսեցաւ Հ.Մ.Ը.Մ.ի ՊՈՒՐՃ Համուտի մասնաճիւղին գործունէութեան մասին, որ միշտ նպատակադրած է պատրաստել Ֆիզիքապէս, հոգեպէս ու բարոյապէս առողջ հայ սերունդներ, որոնք հասակ կը նետեն հայկական միջնորդութիւնը:

Եղբ. Ղազարեան իր խօսքին մէջ յիշեց այն բոլոր նախաձեռնութիւնները, որոնք տեղի ունեցան մասնաճիւղին 80-ամեակին առիթով՝ հաստատելով, որ 80-ամեայ մասնաճիւղը պիտի շարունակէ իր դրօշարչաւը՝ յանուն Հ.Մ.Ը.Մ.ի վերելքին եւ յառաջդիմութեան:

Ապա, մասնաճիւղին սկսուածները ներկայացուցին գեղարուեստական ճոխ յայտագիր մը՝ պար եւ ասմունք:



Studio Alex

Օրուան պատգամաբերն էր Հ.Մ.Ը.Մ.ի Կեդրոնական Վարչութեան ատենապետ եղբ. Գառնիկ Մկրտիչեան:

Եղբ. Մկրտիչեան իր խօսքին սկիզբը յայտնեց, թէ մասնաճիւղը իր 80-ամեակին լիբանանահայութեան կը ներկայացնուի տասնամեակներու վարկով ու վաստակով: Ան այս առիթը նկատեց յարգանքի օր, յարգանք մասնաճիւղի շարքերուն մէջ ծառայած ծանօթ եւ անծանօթ, վաստակաւոր ու համեստ այն բոլոր ղեկավարներուն, մարզիչներուն եւ սկսուած խմբապետներուն նկատմամբ, որոնք հաւատաւոր եւ յարատեւ ճիգերով սերունդներ հասցուցին, իրենց լաւագոյնը եւ առաւելագոյնը տուին, ոգի եւ շունչ դրին իրենց նուիրումին մէջ՝ անխաթար պահելով Հ.Մ.Ը.Մ.ի վեհ առաքելութիւնը:

Ապա, եղբ. Մկրտիչեան լուսարձակի տակ առաւ մասնաճիւղին 80-ամեայ պատմութեան յատկանշական հանգրուանները, որոնց ընթացքին տարբեր պայմաններ տարբեր գործելադաշտեր բացին մասնաճիւղին պատասխանատուներուն դիմաց:

80-ամեակի պայմաններուն եւ առաջդրանքներուն մասին խօսելով, եղբ. Գառնիկ Մկրտիչեան ըսաւ. «Կը հաւա-

տանք, որ այսօրուան չափահաս սերունդը, ներկաները մեծամասնութեամբ, շատ բան ստացան Հ.Մ.Ը.Մ.էն՝ միութենական եւ ազգային պատկանելիութեան հասկացողութեամբ: Շատեր իրենց մտքին ու աչքին լոյսը մաշեցուցին միութեան մէջ: Պարտականութիւն է մեզմէ իւրաքանչիւրին համար, մեր հերթին, փոխադարձել, տալ Հ.Մ.Ը.Մ.ին, տալ նորահաս սերունդին, բարձրացնել զայն: Մեր ժամանակներու նոր պայմանները, շրջապատէն ազդուած այսպէս կոչուած նոր արժէքները, արագընթաց արհեստագիտութիւնը իրականութիւններ են եւ անպայման իրենց ազդեցութիւնը ունին մեր երիտասարդ սերունդին վրայ: Կան նաեւ ընկերային տխուր երեւոյթներ, որոնք ժխտական անդրադարձներ ունին միութենական եւ ազգային-հաւաքական մեր կեանքին վրայ: Արդարեւ, շատերու մօտ կը պակսի պատկանելիութեան գիտակցութիւնը, կը պակսի միութենական կապուածութիւնը, կը պակսի ներկայութիւնը համայնքային կեանքին մէջ»:

«Մեր յաջողութեան գաղտնիքներէն է Հ.Մ.Ը.Մ.ի բարոյական դրամագլուխը, տարիներու վարկը, անունը, որոնց



տոկոսներն են, որ կու գան խտացնելու մեր շարքերը: Այլ խօսքով, անոնք որոնք անցան միութեան շարքերէն, իրենց գաւակները կը դրկեն համոզուած, որ անոնք եւս զարգացնեն այդ պատկանելիութիւնը: Այսօր սակայն, նոր օրերուն որ պայմանները կը թելադրեն մեզի, որ մենք պարտաւոր ենք քննել մեր ընթացքը: Անհրաժեշտ է բարեփոխութիւններ կատարել՝ կազմակերպական որակ պահելու համար», շեշտեց եղբ. Մկրտիչեան:

Շարունակելով, եղբ. Մկրտիչեան խօսեցաւ արհեստավարժութեան մտահոգիչ երեւոյթին մասին եւ հաստատեց, որ Հ.Մ.Ը.Մ-ը չի կրնար զոհը ըլլալ արհեստավարժութեան այսօրուան հրապոյրներուն, որովհետեւ ան իր ծնուն-

դով կոչուած է իր ժողովուրդի ծառայութեան, անոր գաւակներու դաստիարակութեան, իսկ այս բոլորը շահամուլտան մօտեցումով, առուծախով չեն կատարուիր, այլ՝ բարոյական-ազգային արժէքներու պահպանումով եւ միութենական սկզբունքներու կառչած մնալով:

Իր խօսքը եզրափակելով, եղբ. Մկրտիչեան դիտել տուաւ, որ Հ.Մ.Ը.Մ-ը դարձած է մեր իրականութեան երիտասարդական մեծագոյն կազմակերպութիւնը: Հ.Մ.Ը.Մ-ի կազմակերպ ու գործօն յարատեւութեամբ, մենք կրնանք սատարել մեր հայրենիքի հզօրացման եւ քաղաքացիական առողջ ընկերութեան կերտման:

Օրուան պատգամէն ետք, ներկանե-

րը դիտեցին 80-ամեայ մասնաճիւղին պատմութիւնը ներկայացնող տեսերիզ մը, որմէ ետք Վիգէն Տիչչէքէնեան ներկայացուց 80-ամեայ յօբելեանին նուիրուած՝ «Զօն Հ.Մ.Ը.Մ-ի Պուրճ Համուտին» խորագրեալ երգը (հեղինակ՝ Շահանդուխտ, երաժշտական յօրինում՝ Վահրամ Էմմիեան):

Այնուհետեւ, 80-ամեակի յանձնախումբերուն մաս կազմած անդամները ստացան մասնաճիւղի 80-ամեակի նշանակներու կրծքանշանները՝ առ ի գնահատանք իրենց տարած աշխատանքին:

Հանդիսութեան եզրափակիչ պատգամը փոխանցեց Առաջնորդ Շահէ Եպս. Փանոսեան, որ բարձր գնահատեց Հ.Մ.Ը.Մ-ի Պուրճ Համուտի մասնաճիւղին գործունէութիւնը եւ անոր մաղթեց յարատեւ վերելք:

Հանդիսութիւնը փակուեցաւ «Յառաջ նահատակ» քայլերգով:

Հանդիսութեան պաշտօնական բաժինէն ետք ներկաները ուղղուեցան Մարաշի հայրենակցական միութեան «Գերմանիկ» կեդրոնի սրահը, ուր տեղի ունեցաւ 80-ամեակի կարկանդակի հատումը՝ Պուրճ Համուտի քաղաքապետին, Հ.Մ.Ը.Մ-ի կեդրոնական, Շրջանային եւ Պուրճ Համուտի մասնաճիւղի վարչութիւններու ատենապետներուն ձեռամբ:





Հ.Մ.Ը.Մ.Ի ԱՆԹԻԼԻԱՍԻ ՄԱՍՆԱԾԻՒՂԻ ՀԻՄՆԱԴՐՈՒԹԵԱՆ 45-ԱՄԵԱԿԻ ՄԵԾԱՇՈՒՔ ՏՕՆԱԿԱՏԱՐՈՒԹԻՒՆ

ԵՂԲ. ԱՐԱ ՅԱԿՈԲԵԱՆ ԿԸ ՊԱՐԳԵԻԱՏՐՈՒԻ «ԱՐԺԱՆԵԱՅ» ՇՔԱՆՇԱՆՈՎ, ԻՍԿ ԵՂԲԱՅՐՆԵՐ ՆԱԶԱՐԷԹ ՍԱՊՈՒՆՃԵԱՆ, ՊԵՏԻԿ ՍԱՊՈՒՆՃԵԱՆ, ՅՈՎՍԷՓ ՄԱՐԳԱՐԵԱՆ, ԱՆԴՐԱՆԻԿ ՊԷՕՅԻԻՔԵԱՆ, ԶԱԻԷՆ ԳԱՍԱՊԵԱՆ ԵՒ ՔՈՅՐ ԳԵՂԱՆԻ ԷԹԻԷՄԵԶԵԱՆ՝ «ԾԱՌԱՅՈՒԹԵԱՆ» ՇՔԱՆՇԱՆՈՎ



Թղթակից
ԱՆԹԻԼԻԱՍ

Նախագահութեամբ Լիբանանի Հայոց Թեմի Առաջնորդ Շահէ Եպս. Փանոսեանի, հովանաւորութեամբ Հ.Մ.Ը.Մ.ի Լիբանանի Շրջանային Վարչութեան եւ կազմակերպութեամբ Հ.Մ.Ը.Մ.ի Անթիլիասի մասնաճիւղի վարչութեան, Շաբաթ, 28 Նոյեմբեր 2015-ի երեկոյեան ժամը 9:00-ին, տեղի ունեցաւ Հ.Մ.Ը.Մ.ի Անթիլիասի մասնաճիւղի հիմնադրութեան 45-ամեակին նուիրուած հանդիսութիւնն ու կալա-ընթրիքը՝ «Լը Ռուալ» պանդոկին մէջ, Տրպպայէ:

Լիբանանի եւ Հայաստանի քայլերդներուն ունկնդրութենէն ետք, հանդիսութեան բացման խօսքը արտասանեց քոյր Սիլվա Արսլանեան եւ բարի գալուստ մաղթեց ներկաներուն: Ապա բեմ բարձրացաւ օրուան հիւրը՝ լիբանանցի հանրածանօթ երաժիշտ էլիաս Ռահպանի, որ իբրեւ Անթիլիասի բնակիչ, ծանօթ է շրջանի հայութեան եւ անոր ազգային կեանքին մէջ ուրոյն դեր ունեցող Հ.Մ.Ը.Մ.ի գործունէութեան: Այս առիթով ան փոխանցեց արաբ եւ հայ խաղաղ գոյակցութեան գեղեցիկ պատգամ մը, որմէ ետք ան նուագեց իր ստեղծագործութիւններէն կտոր մը:

Յորելեար մասնաճիւղին խօսքը փոխանցեց եղբ. Իշխան Եղիայեան (գործող վարչութեան ատենապետ, Սեպ-






տեմբերին Հ.Մ.Ը.Մ.ի կեդրոնական վարչութեան անդամ ընտրուած): Ան իր խօսքին սկիզբը ամփոփ գիծերով ներկայացուց մասնաճիւղին աշխատանքները՝ հիմնադրութենէն մինչեւ մեր օրերը: Եղբ. Եղիայեան գնահատեց Հ.Մ.Ը.Մ.ական բոլոր քոյրերուն եւ եղբայրներուն, յանձնախումբերուն եւ մարմիններուն ներդրումը մասնաճիւղին աշխատանքներուն մէջ: Ապա, մասնաճիւղին հիմնադիր սերունդին մասին խօսելով ան ըսաւ, թէ 45-ամեակի ուրախ առիթով մասնաճիւղը պիտի պարգեւատրէ վաստակաշատ քոյր մը եւ հինգ եղբայրներ: Ան աւելցուց, որ լաւ պիտի ըլլար, եթէ մասնաճիւղին մնացեալ հիմնադիրները կամ հիմնադրութեան աշխատանքին մասնակիցները եւս ներկայ ըլլային հանդիսութեան (անոնք ճամբորդած կամ մահացած են): Ան յոյս յայտնեց, որ յառաջիկայ վարչութիւնները կը շարունակեն գնահատել մասնաճիւղին հաւատաւոր անդամները:

Հ.Մ.Ը.Մ.ի Լիբանանի Շրջանային վարչութեան խօսքը փոխանցեց ատենապետ եղբ. Հրայր Խաչատուրեան: Ան հաստատեց, որ 45 տարուան գործունէութեան ընթացքին, Հ.Մ.Ը.Մ.ը Անթիլիասի հայահոծ շրջանին մէջ լաւապէս կազմակերպուած է, իր շուրջ համախմբուած են մեծ թիւով հայորդիներ եւ Հ.Մ.Ը.Մ.ականներ: Աշխատանքի ծաւալը օրէ օր ընդլայնած է, իսկ յաջողութիւններն ու նուաճումները տարուէ տարի բազմացած են:

ՃԱՆՉՆԱՆՔ

«ԱՐԺԱՆԵԱՑ» ՇՔԱՆՇԱՆԱԿԻՐ ԵՂԲ. ԱՐԱ ՅԱԿՈՒԲԵԱՆ

Եղբ. Արա Յակոբեան ծնած է 1940-ին, Պուրճ Համուրի Նոր Սիս քաղաքաւար: Նախնական կրթութիւնը կը ստանայ Նոր Սիսի Ազգ. Լուսինեան (Այժմ Ազգ. Արսուր Գասարճեան) վարժարանը, ապա կը յաճախէ Համազգայինի Նշան Փալանճեան ճեմարանը եւ երկրորդական ուսումը կ'աւարտէ Նոր Մարաշի Հայ Աւերարանական Քոլէճէն (Այժմ Հայ Աւեր. Շամլեան Թաթիկեան վարժարան), 1960-ին:



Պատանի տարիքէն ան մեծ սէր կը ցուցաբերէ ֆութպոլի եւ պատրէթի հանդէպ հաւասարապէս: Հ.Մ.Ը.Մ.էն ներս մուտքը տեղի կ'ունենայ 1957-ին, իբրեւ Հ.Մ.Ը.Մ.ի Պուրճ Համուրի ֆութպոլի եւ պատրէթպոլի խումբերու անդամ: 1959-էն սկսեալ սակայն, ան կը կիրարկէ միայն պատրէթպոլ եւ իբրեւ պատրէթպոլիստ կը մասնակցի Հալէպի միջ-մասնաճիւղային խաղերուն:

Եղբ. Արա 1960-1967 մաս կը կազմէ Լիբանանի պատրէթի ազգային խումբին, որուն հետ կ'ունենայ միջազգային բազմաթիւ մրցումներ:

1971-էն սկսեալ ան կը ստանձնէ վարչական պատրաստանաւորութիւններ, իբրեւ Հ.Մ.Ը.Մ.ի Անթիլիասի մասնաճիւղի անդամ: Ապա, ան մաս կը կազմէ Հ.Մ.Ը.Մ.ի օրուան Շրջանային վարչութեան Շրջանային Մարզական Խորհուրդին, որուն պատրաստանաւորութեան ծիրին մէջ կ'իյնային հետապնդել պատրէթպոլի, փինկ-փոնկի եւ հեծելարշաւի մարզաձեւերու աշխատանքները:

Անցնող 45 տարիներուն, եղբ. Արա իր մասնակցութիւնը կը բերէ Հ.Մ.Ը.Մ.ի Լիբանանի շրջանի Ներկայացուցչական գրեթէ բոլոր ժողովներուն: 1979-1983, երկու շրջան, ան մաս կը կազմէ Լիբանանի Շրջանային վարչութեան, այնուհետեւ երկու քառամեակ (1987-1991 եւ 1991-1995) դառնալով Հ.Մ.Ը.Մ.ի կեդրոնական վարչութեան անդամ:





Իր խօսքին աւարտին, եղբ. Խաչատուրեան Շրջանային Վարչութեան անունով շնորհակարտեց Հ.Մ.Ը.Մ.ի Անթիլիասի մեծ ընտանիքը՝ մասնաճիւղի վարչութիւնը, անդամները, սկաուտական եւ մարզական խումբերը, նորանոր յաջողութիւններ եւ վերելք մաղթելով բոլորին:

Ապա տեղի ունեցաւ «Ծառայութեան» շքանշանի եւ գնահատական գիրի տուչութիւն քոյր Գեղանի Էթիէմեգեանին, եղբայրներ Նազարէթ Սպարտանեանին, Պետիկ Սպարտանեանին, Յովսէփ Մարգարեանին, Անդրանիկ Պէօյիւքեանին (ի բացակայութեան) եւ Զաւէն Գասապեանին, որոնք իրենց մեծ ներդրումը ունեցած են մասնաճիւղի առաջին հինգ տարիներու (1970-1975)

գործունէութեան մէջ:

Խօսք առաւ նաեւ Հ.Մ.Ը.Մ.ի Կեդրոնական Վարչութեան ատենապետ եղբ. Գառնիկ Մկրտիչեան եւ անակնկալ մը ներկայացնելով յայտնեց, որ նախորդ Կեդրոնական Վարչութիւնը որոշած էր վաստակաշատ Հ.Մ.Ը.Մ.ական, Կեդրոնական Վարչութեան նախկին անդամ եղբ. Արա Յակոբեանը «Արժանեաց» շքանշանով պարգեւատրել Հ.Մ.Ը.Մ.ի 11-րդ Պատգամաւորական Ժողովի բացման հանդիսութեան: Պարգեւատրումը օրին կամքէ անկախ պատճառներով տեղի չունեցաւ եւ կը կատարուի այսօր, եղբ. Արային սիրելի մասնաճիւղին 45-ամեակի տօնակատարութեան ընթացքին:

Եղբ. Մկրտիչեան ընթերցեց պարգե-

ւատրեալ եղբ. Արա Յակոբեանի միութենական կենսագրական գիծերը (տեսնել առանձին) եւ ապա Հ.Մ.Ը.Մ.ի Կեդրոնական Վարչութեան անունով «Արժանեաց» շքանշանով պարգեւատրեց զայն:

Պարգեւատրումէն ետք, պարգեւատրեալ եղբ. Արա Յակոբեան խօսք առաւ եւ շնորհակալութիւն յայտնեց Հ.Մ.Ը.Մ.ի Կեդրոնական Վարչութեան իր պարգեւատրումին համար: Ան ըսաւ, որ երբ «Արժանեաց» շքանշանը կը ըստանձնէր՝ իր աչքերուն առջեւ կը տողանցէին միութենական կեանքի 60 տարուան ընթացքին իր հետ գործակցած բոլոր եղբայրներն ու քոյրերը, որոնք սիրեցին Հ.Մ.Ը.Մ.ը եւ իրենց առաւելագոյնը տուին անոր՝ արժանի

ըլլալու համար «Բարձրացի՛ր-բարձրացուր» նշանաբանին:

Եղբ. Յակոբեան շեշտեց, որ «Ազգանուէր եւ աշխարհատարած այս միութիւնը կը պատրաստէ ազնիւ, հաւատարիմ, հաւաքական աշխատանքի ատակ, առողջ մարմնով, իր ժողովուրդին նուիրուած հայ մարդը»: Կարեւոր է Հ.Մ.Ը.Մ-ին մեր ժողովուրդին տուածներուն մասին խօսիլ: Ան տուած է առանց ակնկալութեան: Իր սկսուողական եւ մարզական խումբերով ան տարիներ շարունակ հմայած է մեր երիտասարդներու հոգիները, ըսաւ ան:

Շարունակելով, եղբ. Յակոբեան հաստատեց. «Ընդհանրապէս շքանշանները կը տրուին այն անձերու, որոնք կը դադրին աշխատելէ իրենց պատկանած միութիւններուն մէջ: Ես պիտի փորձեմ չըլլալ անոնցմէ մէկը եւ պիտի շարունակեմ աշխատանքը Հ.Մ.Ը.Մ-ի մէջ»:

Տօնակատարութեան ընթացքին սրտի խօսքեր արտասանեցին նաեւ պարգեւատրեալ եղբ. Պետիկ Սպառնճեան:



եան եւ Լիբանանի պասքեթպոլի ֆետերասիոնի նախագահ Ուալիտ Նասսար: Աւարտին, հայրական իր պատգամը փոխանցեց Լիբանանի Հայոց Թեմի Առաջնորդ Շահէ Եպս. Փանոսեան, որ շնորհաւորեց 45 տարի պատնէշի վրայ մնացած Հ.Մ.Ը.Մ-ի Անթիլիասի մասնաճիւղը:

Գեղարուեստական բաժինով ելոյթ ունեցան ջութակահար Լիւսի Չամսրզեան, երգչուհի Լիզա Սվաճեան եւ երգիչ Ժան Նազգաշեան:

Տօնակատարութեան աւարտին տեղի ունեցաւ 45-ամեակի կարկանդակի հատում:


ARMENIA
for private and group trips
www.saberatours.fr







Direct Flights
PARIS
YEREVAN
PARIS

Select your Journey

Guided Tours for 8 Days or 12 Days

Saberatours Sevan Voyages

WITH THE COLLABORATION OF THE NEW AIRLINE COMPANY  **Armavia**
Արմավիա

11, rue des Pyramides
75001 Paris
tel 331 42 96 10 10
fax 331 42 96 18 77
saberatours@selectour.com

48, cours de la Liberté
69003 Lyon
tel 334 78 60 13 66
fax 334 78 60 92 26
sevan@selectour.com

67, La Canebière
13001 Marseille
tel 334 95 09 30 60
fax 334 95 09 30 61
marseille@wasteels.fr

32-38, rue Hanrabadoutian
Yerevan
tel 374 10 52 55 55
fax 374 10 56 40 30
sabera@arminco.com

Photos: © Yann Arthus-Bertand, La Terre vue du Ciel. Licence 075 960031 Studio WIKER 2005 PARIS



Հ.Մ.Ը.Մ.Ի ԼԱԽԱԼԻ ՄԱՄՆԱՃԻՒՂԻ ՀՆԳԱՄԵԱԿԻ ՏՕՆԱԿԱՏԱՐՈՒԹԻՒՆ

Թղթակից
ԼԱԽԱԼ

Հ.Մ.Ը.Մ.ի Լաւալի մասնաճիւղի հնգամեակի տօնակատարութիւնը տեղի ունեցաւ Կիրակի, 8 Նոյեմբեր 2015-ին, Լաւալի Հայ Կեդրոնին մէջ: Ներկայ էին Լաւալի Ս. Գէորգ եկեղեցւոյ հոգեւոր հովիւ՝ Գաբրիէլ Քհնյ. Գամայեան, Հ.Մ.Ը.Մ.ի Կեդրոնական Վարչութեան անդամ եղբ. Մոսիկ Թօփուզեան, Հ.Մ.Ը.Մ.ի Գանատայի Շրջանային Վարչութեան անդամներ, Հ.Յ.Դ. «Սարգիս Զէյթլեան» կոմիտէի անդամներ, քոյր միութիւններու ներկայացուցիչներ եւ շուրջ 80 Հ.Մ.Ը.Մ.ականներ:

Տօնակատարութեան բարի գալուստի խօսքը փոխանցեց քոյր Ռիթա Թորոսեան եւ հրաւիրեց մասնաճիւղի ատենապետ եղբ. Ֆրանսուա Գարայեանը, որ տուաւ հակիրճ զեկոյց մը մասնաճիւղի գործունէութեան մասին: Ապա հրաւիրուեցաւ Շրջանային Վար-

չութեան ատենապետ եղբ. Հրաչ Նաճարեան, որ փոխանցեց Շրջանային Վարչութեան բարեմաղթութիւնները եւ յաջողութեան մաղթանքները:

Յորելեար վարչութիւնը որոշած էր այս ուրախ առիթով պարգեւատրել կարգ մը եղբայրներ, որոնք իրենց նիւթական եւ բարոյական աջակցութեամբ նեցուկ կանգնած էին մասնաճիւղի գործունէութեան: Հետեւաբար, եղբայրներ Նազարէթ Թորոսեան, Սերժ Գէորգեան, Կարօ Աբիկեան եւ Վարդգէս Մելքոնեան ստացան յիշատակի նուէրներ, իսկ եղբ. Բիւզանդ Լախոյեան՝ յուշատախտակ մը:

Յաջորդեց կարկանդակի հատումը, որմէ ետք հրաւիրուեցաւ Հ.Մ.Ը.Մ.ի Կեդրոնական Վարչութեան նախկին անդամ եղբ. Հրաչ Տէր Սարգիսեան, որ պէսզի փոխանցէ օրուան պատգամը: Եղբայրը խօսեցաւ Հ.Մ.Ը.Մ.ի աշխարհասփիւռ գործունէութեան մասին, իր հիմնադրութենէն մինչեւ այսօր եւ յատկապէս շեշտեց միութենական պատկանելիութեան կարեւորութիւնը:

Աւարտին, խօսք առաւ Հ.Մ.Ը.Մ.ի Կեդրոնական Վարչութեան անդամ եղբ. Մոսիկ Թօփուզեան: Կեդրոնական Վարչութեան պատգամն էր հաւատարիմ մնալ հիմնադիրներու տեսլականին եւ զօրավիգ կանգնիլ Հ.Մ.Ը.Մ.ին:

Գաբրիէլ Քհնյ. Գամայեանի «Պահպանիչ»ով վերջ գտաւ տօնակատարութեան պաշտօնական բաժինը:



Լիոնի Սարմազեան
ՔԵՄՊՐԻՃ

Կիրակի, 8 Նոյեմբեր 2015-ի երեկոյեան, գանատահայրութիւնը առիթը ունեցաւ վայելելու անուանի երգչուհի Նունէ Եսայեանի բացառիկ երգահանդէսը, որ տեղի ունեցաւ Թորոնթոյի Համազգայինի թատերասրահին մէջ: Նունէի հետ ելոյթ ունեցաւ Թորոնթոյի Համազգայինի «էրեբունի» պարախումբը, ղեկավարութեամբ պարուսոյց Լոուի Նաճարեանի:

Հ.Մ.Ը.Մ.ի Գանատայի Շրջանային Վարչութեան կողմէ կազմակերպուած այս յիշատակելի երեկոյին ներկայ էին Հայաստանի Հանրապետութեան դեսպան Արմէն Եկանեան եւ տիկինը, Հ.Մ.Ը.Մ.ի Կեդրոնական Վարչութեան անդամ եղբ. Մոսիկ Թօփուզեան, Հ.Մ.Ը.Մ.ի Շրջանային Վարչութեան, Հ.Յ.Դ. Գանատայի Կեդրոնական Կոմիտէի եւ Հ.Յ.Դ. Գ.Ե.Մ.ի Կեդրոնական Վարչութեան անդամներ, Ազգային Վարչութեան, ՀՕՄ-ի եւ Համազգայինի Շրջանային Վարչութեան, Հ.Յ.Դ. «Սողոմոն Թեհլիրեան» կոմիտէի ներկայացուցիչներ եւ 500 հայորդիներ:

Բարի գալուստի խօսքը եւ Նունէի կենսագրութիւնը ներկայացուց քոյր Քաթիա Տէր Յովակիմեան, իսկ Հ.Մ.Ը.Մ.ի Գանատայի Շրջանային Վարչութեան խօսքը՝ քոյր Լիոնի Սարմազեան: Քոյրը իր երախտագիտութիւնը յայտնեց Հայաստանի Հանրապետութեան Սփիւռքի նախարար Հրանոյշ Յակոբ-



Հ.Մ.Ը.Մ.Ի ԳԱՆԱՏԱՅԻ ՇՐՋԱՆԱՅԻՆ ՎԱՐՉՈՒԹԵԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹԵԱՄԲ՝

ԳԵՂԱՐՈՒԵՍՏԱԿԱՆ ՅԻՇԱՏԱԿԵԼԻ ԵՐԵԿՈՅ ԵՐԳՉՈՒՀԻ ՆՈՒՆԷ ԵՍԱՅԵԱՆԻ ՀԵՏ

Եանին եւ Հ.Մ.Ը.Մ.Ի Կեդրոնական վարչութեան՝ Հայաստանի Հանրապետութեան վաստակաւոր երգչուհի Նունէ Եսայեանի համերգին իրականացման իրենց բերած աջակցութեան համար: Ան նաեւ շեշտեց, որ Հայաստանի Հանրապետութեան անուանի երգչուհի Նունէ Եսայեանի այս երգահանդէսը իր «Կանք, պիտի լինենք ու դեռ շատանանք» նշանաբանով նուիրուած է Հայոց Յեղասպանութեան 100-ամեակին: Քոյր Լիոնի աւելցուց, որ Հայ Մարմնակրթական Ընդհանուր Միութիւնը իր հիմնադրութեան օրէն նախանձախնդիր եղած է հայ մշակոյթի պահպանման ու տարածման եւ իր «Բարձրացի՛ր-բարձ-

րացուր» նշանաբանով կը պատրաստէ ազգասէր, հայրենասէր եւ կարգապահ անհատներ:

Քոյրը շնորհակալութիւն յայտնեց բոլոր ներկաներուն իրենց բարոյական եւ նիւթական աջակցութեան համար եւ աւելցուց, որ ձեռնարկին հասոյթը ամբողջութեամբ պիտի յատկացուի համահայրենական 10-րդ մարզախաղերու մասնակցող մարզիկներու ծախսերուն: Խաղերը տեղի պիտի ունենան 2017-ին, Հայաստանի մէջ:

Ներկաները վայելելէ ետք Նունէի քաղցրահունչ ձայնը, ոգեւորուած ու բարձր տրամադրութեամբ մեկնեցան՝ դարձեալ հանդիպելու փափաքով:



PINK
Kimberley[™]
AUSTRALIA

PinkKimberley.com.au

Diamonds beyond rare



Pink Kimberley is an exquisite blend of natural Australian pink diamonds from the Argyle mine and white diamonds surrounded by 18ct gold. The jewellery designs are unique and distinctive. Australian Argyle pink diamonds are the rarest & most precious diamonds in the world.



Հ.Մ.Ը.Մ.Ի ՊՈՒԼԿԱՐԻՈՅ ԲԱՆԱԿՈՒՄԸ ԿԸ ՀԱՄԱԽՄԲԷ 6 ՄԱՄՆԱՃԻՒՂԷ 165 ՄԱՄՆԱԿԻՑ



Տոթթ. Աղանի Գեորգեան Պուլկարեռնէ թարգմանեց՝ Վ.Ն.

2 -9 Օգոստոս 2015-ին տեղի ունեցաւ Հ.Մ.Ը.Մ.ի Պուլկարիոյ տարեկան բանակումը՝ Մալիովիցա լեռան ստորոտը գտնուող հանգստավայրը, ուր շաբաթ մը ամբողջ սկսողներ յիշատակելի պահեր ապրեցան Հ.Մ.Ը.Մ.ի եւ Հայաստանի եռագոյն դրօշին՝ կարմիր, կապույտ, նարնջագոյնի վեհաշուք խորհուրդին տակ:

Բանակումին մասնակցեցան սկսողական քանի մը սերունդ ներկայացնող խմբակներ՝ Սոֆիայէն, Պուրկասէն, Վառնայէն, Շուսէն, Ռուսէն եւ Փրովտիվէն: Մասնակցեցան նաեւ երէցներ, որոնք խումբը պիտի անուանենք «Ապագայի խմբակ», որովհետեւ անոնք սկսողական ընտանիքներ էին՝ իրենց երախաներով եւ բարեկամներով եկած Հայաստանէն, Տուպայէն եւ Եգիպտոսէն: Յուզիչ էր դիտել առաւօտեան եւ երեկոյեան դրօշակի արարողութեան

եւ Հայոց Յեղասպանութեան 100-ամեակի անմոռուկի խորհրդանիշերը, ինչպէս նաեւ Ծիծեռնակաբերդի յուշարձանին մանրակերտը ձեռնալին յատուկ աշխատանքով:

Բանակումին եօթնօրեայ ծրագիրը բազմատեսակ էր: Առաւօտ կանուխ կը կատարուէր մարզանքը, ապա՝ դրօշակի արարողութիւնը: Այնուհետեւ կը յաջորդէին նախաճաշը եւ խմբակներու միջեւ զանազան մրցումները:

Գեղեցիկ պատկեր կը ներկայացնէր բանակողներու շարքը, երբ անոնք դրօշակներով ու բարձրաձայն երգերով արշաւի կ'երթային: Ճաշի հանգիստէն ետք տեղի կ'ունենային հայերէն լեզուի եւ հայոց պատմութեան դասախօսութիւններ՝ Վիքթորիա Ներսիսեանի մօտ: Անհատապէս կախարդանք՝ բացակայող չկար: Յանձարարելի է, որ յաջորդին աւելի երկար ժամեր յատկացուին նման դասախօսութիւններու:

Օրական, խմբակները կը կատարէին մարզական տեսակաւոր խաղեր: «Նամակ» խաղը առօրեայ հետաքրքրութիւն



ՄԱՐՁԻԿ, 34ԳՊ ՏԱՐԻ, ԹԻԻ 6-7 (396-397)



կը ներկայացնէր, իսկ երեկոյեան, խորոյկի շուրջ հաւաքուած, օրուան յոգնութիւնը մոռցած, բոլորը կ'երգէին հայերէն երգեր՝ մեղմ օրօրայինէն մինչեւ «Սարդարապատ», «Գետաշէն»...: Մեր կուրծքերը հպարտութեամբ կը լեցուէին, երբ կը լսէինք յեղափոխական երգեր, ուր կը գովերգուէին Անդրանիկի, Սերոբի եւ Գէորգ Չաւուշի հերոսութիւնները: Որքան շատ երգեր գիտեն մեր տանը, բայց հերոսական, հնամենի ժողովուրդին գաւակները՝ մեր սկսողները: Խարոյկին շուրջ հայրենասիրութեան եւ ազգի անձնուէր պատկանելիութեան կայծերը կը ցոլային: Այդ կայծերէն մէկն էր Հայաստանի Հանրապետութեան պատուոյ հիւպատոսին նախաձեռնութիւնը՝ ցուցադրել Հայաստանի պատմական մայրաքաղաքներուն նկարները, Արեւմտահայաստանի աւերուած եկեղեցիներն ու վանքերը՝ մշակութային մեր հարուստ ժառանգութիւնը Արարատի երկու կողմէն, ներկայացուած տաքթ. Աղաւնի Գէորգեանի կողմէ:

Ինչպէս ամէն տարի, այս տարի եւս բանակումին պատասխանատու կազմը փակման խարուկահանդէսին հրաւիրած էր հիւրեր: Բացի ծնողներէ, հրաւիրին ընդառաջած էին Հայաստանի հիւպատոսն ու դեսպանատան խորհրդատու տիկինը: Հիւրերու շարքին էին Եղիազար Ուզունեան Փրովտիվէն, Սոֆիայի Համադրիչ Խորհուրդի ներկայացուցիչներ եւ ուրիշներ:

Խարուկահանդէսին ծրագիրը բազմերանգ էր՝ թատերախաղ, հայկական երգ-երգաշտութիւն, հայկական պար, բուրգերու կազմութիւն եւ այլն: Այս բոլորը հոգիները լեցուցին անասման ուրախութեամբ:

Ամէնէն ծանրը հրաժեշտի պահն էր, բայց մենք բոլորին աչքերուն մէջ տեսանք բոց մը յաջորդ տարի, 2016-ի բանակումին փորձութիւնները յաղթելու եռանդով:

2016-ը առանձնայատուկ տարի մը պիտի ըլլայ պուլկարահայրութեան համար: Տարին պիտի նշէ Պուլկարիոյ մէջ Հ.Մ.Ը.Մ.ի սկսողներու վերահաստատման 25-ամեակը: «Շատ գործ կայ կատարելիք՝ հանդէսներ, անակնկալներ եւ դեռ շատ բան» կը բաժնեկցին բանակում 2015-ի ղեկավարները:

Շնորհաւորութիւններ 2015-ի բանակումը ծրագրած եւ իրականացուցած պատասխանատու մարմնին եւ խմբապետական կազմին, քոյր Տիրուհի Պարտիզպանեանին, որ 165 հոգի հաւաքեց սկսողական դրօշի տակ, բանակումի խմբապետ եղբ. Գարէն Պէյլէրեանին, խմբապետներ Մարտիկ Պէյլէրեանին, Սրբուհի Գաբրիէլեանին, Մէլրի Սարգիսեանին, Իգայէլլա Չալոյվսկային, Մէլրի Խաչիկեանին, Վարդանուշ Խաչիկեանին (բանակումի խորհրդանիշին հեղինակը), Էլիզապէթ Պողոսեանին (լուսանկարներու հեղինակ), նուիրատուներուն եւ ծնողներուն, որոնք ինչպէս որ դաստիարակած են հայրենիքի եւ հաւատքի հանդէպ սէր ունեցող Հ.Մ.Ը.Մ.ական նման սկսողները:

«ԺԱՅՈՒԵՐՈՒ ԱՆՏԱՌ»Ը

Պատրաստեց՝ Շաղիկ Գեորգեան
ՊԵՅՐՈՒԹ



«Ժայուերու անտառ»ը, որ կը գտնուի Չինաստանի հարաւ-արեւմուտքը, Եունան գաւառին մէջ, ունի 12 հազար քառակուսի քլմ. տարածութիւն: Ան յառաջացած է փոթորիկներու, տեղատարափ անձրեւներու եւ հողի մաշումներու պատճառով քշուած անթիւ ժայուերէ: Այս ժայուերը ունին զանազան ձեւեր, կը նմանին սուրերու, փիղերու եւ այլն: Կան ժայուեր, որոնց եթէ զարնէք՝ կը հանեն զանգակի ձայն:

Աշիմա: Հոս կը գտնուի ժայու մը, որ նման է չինացիներու առասպելական գեղուհին՝ Աշիմային:

«Ժայուերու անտառ»ին ճամբաները անել են՝ լաբիրինթոս, կարելի չէ դիւրութեամբ գտնել որեւէ ճամբայ: Այս պատճառով ալ պայման է հետեւիլ ուղեցոյցի: «Անտառ»ին ամէնէն գեղեցիկ բաժինը կը կոչուի

Ժայուերը մոխրագոյն են, բայց անձրեւուն տակ կը ստանան սեւ գոյն, իսկ անձրեւէն վերջ կ'ըլլան տեսակաւոր: Ապա, քանի մը օր ետք անոնք դարձեալ կը վերագտնեն իրենց բնական գոյնը՝ մոխրագոյնը:

ՔՆՆՈՒԹԻՒՆՆԵՐ

Կրթական հաստատութիւններու մէջ քննութիւն կատարելու սովորութիւնը ունի դարերու պատմութիւն: Առաջին քննութիւնները կատարուած են Քրիստոսէ առաջ երրորդ հազարամեակի կէսերուն, հին Բաբելոնի դպրոցներուն մէջ: Պատասխանատուները կը ստուգէին թէ ի՞նչպէս կը գրեն շրջանաւարտները, ի՞նչ գիտեն կտաւներու, մետաղներու եւ բոյսերու մասին, որքանո՞վ կը տիրապետեն գումարումի, հանումի, բազմապատկումի եւ բաժանումի գործողութիւններուն:



Հին Եգիպտոսի մէջ, քուրմ դառնալ փափաքողները կը կատարէին չափազանց խիստ քննութիւններ: Առաջին հանգրուանին, քրմա-



պետները հարցազրոյցի միջոցով կը ստուգէին նորեկներուն կրթութեան մակարդակը, կենսագրութիւնը, գեղեցիկ խօսելու կարողութիւնը: Երկրորդ հանգրուանին՝ ենթակային աշխատելու, լսելու եւ լռելու յատկութիւնները: Եւ վերջապէս, վերջին փուլին՝ ենթակաները կ'ենթարկուէին զանազան փորձութիւններու՝ դիմանալու համար կեանքի դժուար պայմաններուն:

Հին Չինաստանի մէջ, դասատուները իրենց աշակերտները հոգեբանական քննութիւններէ կ'անցընէին շուտասելուկներու եւ հանելուկներու ճամբով:

Եւրոպայի մէջ, պաքալորէայի եւ մագիստրոսի կոչում ստանալու հա-



մար ուսանողներ քննութիւններ կը սկսին ներկայացնել միջնադարուն: Այս քննութիւնները իրենց ձեւով շատ մօտ էին այսօրուան քննութիւններուն: Ի դէպ, Ռուսաստանի մէջ քսաներորդ դարու սկիզբը քննութիւնները արգիլուեցան... եւ զարմանալին՝ ո՛չ թէ աշակերտներու, այլ՝ ուսուցիչներու առաջարկով: Շատ մը ուսուցիչներ հանդէս եկան յայտարարութեամբ մը, որ քննութիւնները որեւէ օգուտ չունին, աշակերտները գոց կը սորվին միայն այն ինչ որ քննութեան կը պահանջուի իրենցմէ: Համայնավարութեան իշխանութեան գալով, սակայն, պատասխանատուները անդրադարձան, թէ երկրի ուսման մակարդակը ինչքա՛ն կը նահանջէ, հետեւաբար անոնք վերահաստատեցին քննութիւններ կատարելու որոշումը:



ՀԱՆԵԼՈՒԿ

Ո՞վ է, ի՞նչ է:
Կանաչ ու ծփան
անթիւ եղբայրներ,
Կը թարմացնեն
միշտ մթնոլորտը մեր,
Ե՛ւ գիրք կը դառնան, ե՛ւ կահոյք, ե՛ւ տուն,
Մեծ բարեկամ են աշխարհին,
մարդուն:
(Թիւ 388-390 հանելուկիս
պատասխանն էր՝ լուսին):



Քամպուտիոյ լողացող դպրոցներ

Այս դպրոցները կառուցուած են ջուրի վրայ: Երկրին մէջ սովորական երեւոյթ են նման դպրոցները, որոնք ընդհանրապէս ունին 60 աշակերտ եւ մէկ դասարան:

«Քենեյեքէն»՝ Քոչուորներու դպրոց



Այս դպրոցը կը գտնուի Ռուսիոյ Եաքութիա շրջանին մէջ: Ան կը նկատուի ամէնէն փոքրը թէ՛ աշակերտներու թիւով եւ թէ՛ տարածութեան իմաստով: Հոս կը սորվին 6-8 աշակերտներ, որոնք ունին 2-3 ուսուցիչներ:

Ալֆա՝ Այլընտրանքային դպրոց


Կը գտնուի Գանատայի մէջ: Այս դպրոցը կառուցուած է 1972 թուականին: Անոր իւրայատկութիւնը այն է, որ դպրոցին աշակերտներէն իւրաքանչիւրը ունի իր առանձին հետաքրքրութիւնները: Դպրոցը դասացուցակ չունի: Դպրոցի իւրաքանչիւր դասարանին մէջ աշակերտներ կը սորվին ոչ թէ ըստ տարիքի, այլ՝ ըստ հետաքրքրութիւններու:

Terraset՝ Գետնին տակ դպրոց

Անսովոր դպրոց մըն է, որ կը գտնուի Մ. Նահանգներու Վըրճինիա նահանգի Ռէսթըն քաղաքին մէջ: Դպրոցը շինուած է 1970-ական թուականներուն: Այդ շրջանին Մ. Նահանգներու մէջ ուժանիւթի ճրգնաժամ կար եւ որոշուած էր շինել դպրոց մը, որուն ջեռուցումը կատարուի ինքն իրեն:



Տարբեր Հայեացքով



ՍՈՒՏՈՔՈՒ

	8			6			9	
4	7		8		2		3	1
		1		7		2		
	3						1	
9		6				3		2
	5						4	
		3		4		8		
7	1		5		9		6	3
	9			8			2	

Հորիզոնական եւ ուղղահայեաց 9 շարքերով եւ սիւնակներով (9x9) կազմուած գծացանցը բաղկացած է իւրաքանչիւրը 9 բառակուսի հաշուող 9 բաժիններէ (3x3): Բացառումի սկզբունքին կիրարկուածով իւրաքանչիւր բառակուսիի մէջ թուանշան մը զետեղել՝ այնպէս մը, որ հորիզոնական իւրաքանչիւր շարք, ուղղահայեաց իւրաքանչիւր սիւնակ եւ 9 բառակուսիից իւրաքանչիւր բաժին ունենայ 1-9 թուանշանները՝ իւրաքանչիւր թուանշան միայն մէկ անգամ գործածուելու պայմանով: Այլ խօսքով, ոչ մէկ պարագայի արտօնուած է թուանշան մը կրկնել միեւնոյն շարքին, սիւնակին եւ բաժինին մէջ: Սկսելու համար, կարգ մը թուանշաններ իրենց ճշգրիտ բառակուսիներուն մէջ զետեղուած են:

Նախորդին լուծումը

2	7	4	1	8	6	9	5	3
9	5	1	3	4	7	6	2	8
3	6	8	2	9	5	1	4	7
4	9	6	8	5	2	3	7	1
5	1	2	9	7	3	4	8	6
7	8	3	6	1	4	2	9	5
8	2	7	4	6	1	5	3	9
6	3	9	5	2	8	7	1	4
1	4	5	7	3	9	8	6	2

Պատասխանը՝ յաջորդիւ



ԿԸ ՅԻՇԵՄ ԵՒ ԿԸ ՊՍՀԱՆՉԵՄ
1915 - 2015

Հ.Մ.Ը.Մ.
ՀԱՄԻՊ
1925 2015
90
ՄԱՆԿԱԿ

Հ.Մ.Ը.Մ. ՀԱՄԻՊ